

աւ. 163 20/2-461

Վ. ԹԵՐԶԻԲԱՇՅԱՆ

ԱՐԱԶԻ

ՀԱՅԴԵՏԿԱՆ



ԱՐԱՋԻ

Հ. ԹԵՐԶԻԱԿԱՆԱՆ

891.99.092 [Արապ]

Բ- 52

ՅՅՈՒԳԼԱՄ Է 1981 թ.

Ա Ր Ա Ձ Ի

3047
3047
A I 6433



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



1 9 4 0

В. ТЕРЗИБАШЯН
АРАЗИ

Гиз АРМ. ССР, Ереван, 1940 г.

Խորհրդային արձակագրութեան ավագ ներկայացուցիչ Արազին, իր գրական գործունեությունը սկսել է դեռևս հեղափոխությունից առաջ: Նրա առաջին գրական յերկը տպագրվել է 1906 թ. «Մուրճ» ամսագրում: Այդ պատմվածքը («Դոն Կարապետի արշավանքը դեպի Կղերաձոր») Ֆերնանդո սոտրագրութեամբ) բնորոշ է այն տեսակետից, վոր յերթաձորդ հեղինակը կարողանում է ճիշտ կերպով բնութագրել դաշնակցութեան սոցիալական եյությունը, մերկայնել նրա դեմքը, վորպէս բուրժուազիայի և կղերականութեան հետ սերտորեն շաղկապված կուսակցութեան: Ուշագրաւ է և այն, վոր Արազին այս սատիրական գրվածքում ցույց է տալիս իր գրական կուլտուրան, իրեն նմուշ վերցնելով Սերվանտեսի հանճարեղ յերկի, Վոլտերի փիլիսոփայական պատմվածքների յուսմորիստական-յերգիծական ձևը, Արազին ցայտուն գծերով նկարում է դաշնակցութեան ներկայացուցիչ Դոն Կարապետին, վորի բոլոր հոխորտանքները վերջանում են կղերապետի, այսինքն կաթողիկոսի աջը համբուրելով:

Արագու այս գրական առաջին յելույթը նշանակալից ե նաև այն իմաստով, վոր հեղինակը վորոշում ե իր տեղը գրականության մեջ, նա հենց սկզբից սահմանագծվում ե բուրժուական նացիոնալիստական բանակից և հակադրվում ե նրան: Գրական այս կողմնորոշումը պատահական չէր, դա պայմանավորված եր յերիտասարդ հեղինակի անցած ուղիով և աշխարհայացքով: Գյուղացիական ընտանիքի զավակ Մովսէս Հարությունյանը (ծնված Շուշի 1878 թ.) մանուկ հասակից զգացել եր տիրող կարգերի ճնշումը, չքավոր գյուղացիության անլուր հարստահարությունը և կեղեքումը: Մինչև 12 տարեկան հասակը Արագին ապրել ե գյուղում, վորտեղ և ստացել ե իր նախնական կրթությունը, միաժամանակ մասնակցելով գյուղատնտեսական աշխատանքներին: Ժողովրդական կյանքին անմիջականորեն մոտիկ լինելը խորապէս տպավորվում ե փոքրիկ Մովսէսի մեջ, գյուղի ցավերն ու կարիքները նա զգացել ե վաղ, և դա դրել ե իր յորոշմը նրա գրական գործունեության բնույթի վրա: Արագու գրվածքների մեջ նշանակելի տեղ ե գրավում գյուղը:

90-ական թվերի սկզբին Արագուն հաջողվում ե շարունակել իր ուսումը Թբիլիսիի ռուսական ուսուցական դպրոցում: Այստեղ նրա դասընկերն եր Ստ. Շահումյանը, վորի հետ Արագին մտերմանում ե աշակերտական տարիներում: Ինչուօրէն թվերի վերջերին Թբիլիսիի աշակերտների մեջ սկսվում ե զգալի հետաքրքրութուն դեպի հասարակական հարցերը, աշակերտական այդ շարժումը, վորի գլխավորողներից մեկն եր Ստ. Շահումյանը, ճիշտ ե՝ կրում եր փոքր

ինչ անորոշ, մշուշային բնույթ, ապա-
րուհակում եր իր մեջ հեղափոխական սաղմեր. դա
նախապատրաստական շրջան եր այն աշակերտներին
համար, վորոնք հետագայում իրենց ուսանողական
տարիներին սկսեցին հաղորդակից լինել իսկական
հեղափոխական շարժման և ստացան կրակի մկրտու-
թյուն պայքարելով Լենինի—Ստալինի կուսակցու-
թյան շարքերում:

Ավարտելով ուսական դպրոցը Արազին մեկնում
է Պետերբուրգ (այժմ Լենինգրադ) և ընդունվում է
տեխնոլոգիական ինստիտուտը: Այստեղ արդեն նրա
աշակերտական անորոշ ձգտումները սկսում են ավելի
հստակ ձևեր ստանալ. ուսանող Արազին վորպես հե-
ղափոխական ցարիզմի ժամանակ ձերբակալվում է
յերկու անգամ՝ 1901 և 1903 թվերին Պետերբուրգում:
Բանտարկությունը ևս զգալի դեր է խաղում նրա
աշխարհայացքի ձևավորման գործում: Նրա մեջ ել ա-
վելի յե կոփվում հավատը դեպի բանվոր դասակարգի
ուժերը և նրա վերջնական հաղթանակը: Արազին իր
մի շարք պատմվածքներում նկարագրել է ընդհատակյա
հեղափոխական աշխատանքը. Այդ պատմվածքները նա
գրեց ավելի ուշ, հեղափոխության հաղթանակից հետո,
վերհիշելով մոռյլ անցյալը և համեմատելով այն
ներկա պայծառ իրականության հետ:

Իր առաջին պատմվածքից հետո Արազին հետա-
գայում սկսում է աշխատակցել բանվորական մա-
մուլին, վորի որդանները շատ կարճատև կյանք եյին
ունենում ուժեղացող ցարական ուսկցիայի ճնշումների
հետևանքով: Ասպարեզը պատկանում էր միայն բուր-
ժուական, ազգայնական գրականության ներկայա-
ցուցիչներին:

1914 թ. իմպերիալիստական պատերազմը ել
ալիքի ուժեղացրեց նացիոնալիստական տրամադրու-
թյունները, «խտացավ տղալիստական մթնոլորտը»,
ինչպես գրում է ինքը՝ Արազին: Հեղափոխական
պրոլետարիատի դատին նվիրված գրողները մեծ դժ-
վարությամբ ելին կարողանում լույս ընծայել իրենց
գրվածքները: Բուրժուական հրատարակչությունները
մերժում էին հրատարակել պրոլետարական գրողների
յերկերը: 1915 թվին պրոլետարական բանաստեղծ,
հանգուցյալ Ժողովրդական պոետ Հակոբ Հակոբյանի
հետ միասին Արազին խմբագրել է «Կարմիր մեխակներ»
և «Բանվորի ալբոմ» Ժողովածուները, վորոնք հան-
դիսանում էին պրոլետարական գեղարվեստական
գրականության առաջին որդանները հայ իրականու-
թյան մեջ:

Միմիայն սոցիալիստական մեծ հեղափոխությունից
հետո Արազին հնարավորություն ունեցավ բառի բուն
իմաստով «գրականությամբ գրադվելու լայն թա-
փով» ինչպես ասում է ինքը՝ հեղինակը: Հոկտեմբեր-
յան հեղափոխությունը հնարավորություն տվեց Արա-
զուն ամբողջովին նվիրվելու իր կոչմանը, նա սկսեց
աշխատել կրկնապատկված յեռանդով, կարծես ցան-
կանալով հետ բերել կորցրած ժամանակը:

*
*
*

Դեռևս հեղափոխությունից առաջ Արազին գտել
էր իր գրական կողմնորոշումը, նա անցել էր հեղա-
փոխության կողմը: Նույնիսկ ռեակցիայի տարիներ-
ում, հեղափոխության ժամանակավոր սպառնության
շրջանում նա չի վարակվել հուսալքումով և պեսի-

միզմով, հաստատ համատալով պրոլետարիատի ապա-
գա հաղթանակին, գիտակցելով, վոր այդ հաղթանակը
միայն կտրող և հաստատել բոլոր ազգությունների
աշխատավոր մասնաների համերաշխությունը և հա-
մագործակցությունը սոցիալիստական հասարակար-
գում:

Հենց իր առաջին պատմվածքներում նա պար-
զորոշ կերպով գրանդորում և իր գիրքավորումը, կանգ-
նում և շահագործվողների և ճնշվածների կողմը, ար-
համարհելով գրական եփան փառքը, վոր կարելի չեր
ձեռք բերել շոյելով քաղքենու ճաշակը, բավարարելով
բուրժուական գրական շուկայի պահանջները: Արագու-
սկզբնական այդ փոքրիկ միլյատուր-պատմվածքնե-
րում, վորոնք հիշեցնում են հաճախ արձակ բանաս-
տեղծությունների, մենք տեսնում ենք արդեն հասու-
նացած գրողի հատկություններով օժտված մի հեղի-
նակի, վորը վերին աստիճանի խստապահանջ և դե-
պի իր նյութը, չունի գրական առարկա նոր մըտ-
նողներին հատուկ յերկարաբանությունները, շեղում-
ների, ճապաղ դարձվածքներ, այլ աչքի յե ընկնում
իր լեզվի և պատկերավորումների պարզությամբ,
հատկությամբ: Նա կտրողանում և տեսնել եյալանը,
հատկանշականը յերևույթների մեջ վորպես մի շրտ-
րիխ, ընդհանրացնել այդ շտրիխը և վերածել գեղար-
վեստական ընդգրկող հուզիչ պատկերների: Յեվ այդ
նա անում և ամենադժվար ժանրերից մեկի՝ կարճ
պատմվածք-նովիլլի մեջ՝ հաճախ 2—3 եջանոց:

Արագու. նախահեղափոխական շրջանի կարճ նո-
վելներում մենք տեսնում ենք ձևի և բովանդակու-
թյան ներդաշնակութուն: Կարելի չե առել, վոր Ա-

բաղին հինց սկզբից մշակել էր ուրույն ձևը, կարճ,
նույնիսկ շատ կարճ պատմվածքը, վորի մ ջ թեման
զարգանում և վոչ թի նատուրալիստական պատկ ռաց-
ման, այլ լիբելակոն-հուզական (եմոցիոնալ) ներթա-
վանցման միջոցով: Այս կարճ պատմվածքներում հեղի-
նակը նպատակ էի ունեցել տալ մարդկանց կյանքի լայն
կտավ այդ հնավավոր հլ չե անել այդքան նեղ սահ-
մաններ ունեցող դրական մի ժանրում, սակայն դրա
փոխար ն նրանց միջ տրված և սոցիալական կյանքի
յերևույթների խառակտերիզացիան, վորը պարզում և
միզ համար մարդկանց իրական հարաբերոթյունները,
նրա ց սոցիալական հարաբերությունները: Վերցրեք
այն փքր պատմվածքները, վորոնք գրված են նա-
խապատերադմյան շրջանում: Երանց մեջ մենք տա-
նում ենք բուրժուական հասարակության խոր հա-
կասոթյունների պատկերացումը գեղարվեստական
խտացած և ընդհանրացված ձևով:

«Արևը» պատմվածքում մենք խորապես զգում
ենք սոցիալական կյանքի այդ հակասություններից
մեկը, յերբ բուրժուական մեծ քաղաքի խոնավ նկու-
ղի մեջ մեռնում և արևի շողից զրկված աղջկը, իսկ
հուսահատ հայրը գոնգատվում և հզոր արևից, վորը
խնայել և իր մի հատ շողը և սպանել նրա փոքրիկ
կուսիկին:

«Արևը տխրեց ու մթնեց»:

«Գնա, առաջ. հայտնիւր աշխարհին, վոր վերիի
հարկը արևի շողքերը խլեց ստվեր դցեց ներքևի
հարկին և սպանեց են վոսկեհիւր աղջկան»:

Արևի համար լսոտ յերևույթին անսովոր այս
պատասխանը ընթերցողը ընդունում և շատ բնական

կերպով, գտնելով այնտեղ պատմվածքի անխուսափելի
յեղրակացությունը, նրա սոցիալական խմաստը:

«Հեքիաթ» պատմվածքում տրված և սոցիալա-
կան կյանքի մի ալ հակասությունը բուրժուական
հասարակության մեջ: Այստեղ մենք տեսնում ենք
ճնշված, կեղեքված գյուղացիական մասսաների մռայլ
կյանքը, վորը չունի հույսի և լույսի վոչ մի նշույլ:
Մարդիկ այնտեղ իրենց մխիթարությունը վորոնում
են հեքիաթային աշխարհում, վորտեղ «յոթը սարիքի
յետևում հրեղեն թռչուն և ապրում իր վոսկե վան-
դակում», վորտեղ դաշտերը ծածկվում են մշտադալար
կանաչով և մայիսյան ծաղիկներով ջինջ, պայծառ
յերկնքի տակ: Սակայն դաժան կյանքը, անողոր
իրականությունը գալիս և և կոպիտ կերպով ընդհա-
տում հեքիաթը:

Գյուղացի չքավոր Մարգարը ձմռան յերեկոները
հավաքում եր իր շուրջը գյուղի յերեխաներին և պատ-
մում նրանց հրաշալի հեքիաթներ: «Յով Մարգարն
սկսում եր կարծես յերազելով, աչքերը փակ, կուր
աշուղի նման, ո սում եր պատմել իր սիրած են մեծ
հեքիաթը հրեղեն թռչունի և յերեք յեղբայրների մա-
սին... Յոթը սարիքի յետևում հրեղեն թռչունն և
ապրում իր վոսկե վանդակում: Ու նրա շուրջը հաստ
ամրակուռ պատեր են քաշած ու յերկաթն մեծ դռ-
ների մոտ սև, դաժան վիշապները հսկում են գիշեր
և ցերեկ...»

«Հրեղեն թռչունը» — հանդիսանում և այն յեր-
ջանկությունը, վոր խել ևն ժողովրդից դաժան վի-
շապները, շահագործողները և ճնշողները: Ժողովուրդը
դարերով յերազել և յերջանկության մասին և նրա

շուրջը հորինել հրաշագան հեքիաթներ, Յեվ ահա
յերեք յեղբայրները մեկ մեկու յետևից զնում են
այդ հրեղեն թռչունը փնտռելու, բայց միայն փոքր
յեղբայրն և տերապետում նրան, «հաղթելով ափսոս
վիշապներին...»

Սակայն դավաճան յեղբայրները խաբում են նրան
և խլում նրանից հրեղեն թռչունը... Հեքիաթի ամե-
նահետաքրքրական տեղը հանկարծ դրսից կանչում
են Մարգարին... Դաժան աղան և կանչում, պետք և
հնազանդվել նրա կամքին, յենթարկվել նրա քմա-
հաճույքներին:

«Մարգարը կարծես քնից արթնացած ականջ
դրից, ապա վրաները ձգելով արեխներէ մեջ ու գլխին
դնելով փափախը դուրս յեկավ փողոյ: Դուռը բաց
մնաց և դրսից մի անախորժ սառնություն ներս յե-
կավ...»

«Ջրացան մեր յերեակայությունից մայիս-
յան դաշտերը, ծաղիկները: Մեզ կծկում եր ձմռան
ցուրտը: Իսկ մութ անկյուններից չարագուշակ փր-
փռուկը դաժան աղայի անունն եր տալիս, վոր
կարեց վառ հեքիաթը»:

Սա նախահեղափոխական դյուղի քայքայման և
թշվառացման ցնցող պատկերն է: Մենք տեսնում ենք,
թե ինչպես հարուստ աղան, գյուղի կուլակը ծծում և
չքավոր դյուղացու կյանքի ամենավերջին հյուսթը,
դաժան շահագործման միջոցով քայքայում և նրա
տնտեսութունը, սովի մատնում նրա ընտանիքը:
Հեքիաթի ռեալիստիկ յեղբայրները խաբում են իրենց
փոքր յեղբորը, իջեցնում են նրան հորի մեջ, ապա

առնելով նրա վաստակած հրեղեն թռչունը, թողնում
են գնում»...

Ըստ յերևույթին այնքան պարզ մի պատմվածքի
սյուժեն Սրազին հագեցնում է ներքին խոր լմա-
տով, «Հեքիաթը» դառնում է մի սխմվուլ, Հրեղեն
թռչունի հեքիաթի յիրրորդ յեղրայրը, շահագործված
և ճնշված աշխատավոր ժողովուրդը, վորի մարմնա-
ցումն է Մարգարը, փակված է մութ հորում, ա-
կայն նա փորձում է ազատվել այգաեղից, թոթափել
իր ուսերից շահագործողների և ճնշողների լուծը:

Պատմվածքի վերջում հեղինակը շարունակում է
ընդհատված հեքիաթը. «Շատ հուվից, ուր ազատ հո-
վերն են ապրում, յոթը սարի հեռուից թռչելով գա-
լիս է չորրորդ յեղրայրը, նա ունի նաև ամպերից
վեր իր կարմիր նժույգով, գալիս է ազատելու Մար-
գարին իր խավար բանտից»: Սա միլիոնավոր մառ-
աաներին հասկանալի մի սխմվուլ է՝ հագեցած հեղա-
փոխական բովանդակությամբ: Ցարական ցենզու-
րայի պայմաններում Սրազին վարպետորեն ոգտա-
գործում է այդ հնարքը պատկերելու համար «չոր-
րորդ յեղրոր», — պրոլետարիատի դերը աշխատավոր
ճնշված մասսաների ազատագրման գործում:

Սրազին կարողանում է հեղափոխության իդեան
խառնել գեղարվեստական պատկերների մեջ, նա
յերբեմն դիմում է սխմվուների, վորպեսզի կարո-
ղանա գեղարվեստական միջոցների առավելագույն
տնտեսման միջոցով արտահայտել իր միտքը, գրական
այդ հնարքն ոգնում է նաև խուսափելու ցարական
ցենզուրայից, վորը այդ «յեզոպոսյան լեզվի» տակ
անկարող էր գուշակելու գրվածքի խսկական գաղա-

փարական բովանդակությունը: Սիմվոլն այդպիսով Արազու մոտ լցվում է հեղափոխական բովանդակությամբ. դա դառնում է մի այլաբանություն, նման այն ալեգորիաների, վորոնց միջոցով պրոլետարական մեծ գրող Մ. Գորկին արտահայտում է իր հեղափոխական գաղափարները («Մըրկահավը», «Բազեյի յերգը» և այլն): Այդ ալեգորիաները պարզ և մատչելի յեն միլիոններին:

Արազին անկասկած կրել է Մ. Գորկու գրական այդ ուղղության (հեղափոխական ուժմանտիզմի) վորոշ ազդեցությունը: Այդ ևս ավելի դրսևորվեց հեղափոխության առաջին տարիներին Արազու մի շարք արձակ բանաստեղծություններում: Սակայն հեղափոխությունից առաջ Արազին ալեգորիայի ձևը ոգտագործում է ռեալիստական պատմվածքի հյուսվածքի մեջ: Այդպիսի ալեգորիկ (այլաբանական) պատմածք է նաև 1913 թ. գրված «Կիսատ տունը», վորը ինչպես «Հեքիաթը», «Վերջին տերերը» և այլն խտացնում է իր մեջ վորոշակի գաղափարական բովանդակություն: Այդ պատմվածքում Արազին նուրբ ակնարկներով խոսում է գալիք հեղափոխության մասին: Նա վերցնում է մի պատկեր 1905 թվի հեղափոխության շրջանից: Դա այն շրջանն է, յերբ «Մութ խորշերից ձայնեց դարավոր բողոքը, յերբ բացվեցին փակ բերանները...» Այդ որերին գյուղացի Սարգիսը վերադառնում է քաղաքից և հայտարարում. «Ել հարուստաղքատ չկա, սրանից դենը բոլորս մին ենք»: Յեւ Սարգիսն ուրախ սրտով սկսում է իր նոր տան շինքը:

Նա բարձրացնում է պատերը, բայց չի կարողանում ծածկել տանիքը: Տունը մնում է կիսատ:

Հեղափոխությունը պարտւում է, գյուղի կյանքը նորից մտնում է իր նախկին հունի մեջ: Յերկու վաշխառուները՝ հաստախոր Սանդերոն և Նիհար, չորացած Մարտիրոսը դարձյալ գրավում են իրենց առաջվա դիրքերը: Նրանք ծաղրում են Սարգսին, վոր սա չկարողացավ ավարտել իր կիսատ տունը: Կուլակ Սանդերոն ասում է Սարգսին. «Սարգիս, բա ասում եյիր եւ հարուստ-աղքատ չկա. բա ինչի չես տունդ շինում, ախր կիսատ ա մնացել»: Սարգիսը պատասխանում է նրան. «Շատ մի յեղակալիլ, մի առվով վոր ջուր ա գնացել, մին եւ կգա. սաղ աշխարհի տունն ա կիսատ մնացել, մենակ իմը հո չի: Լալ իմանաս՝ են որը ելի կգա, տունս կշինեմ, քու աչքն եւ կհանեմ...»: Այսպիսով «կիսատ տունը» դառնում է մի սիմվոլ չավարտված հեղափոխության, վորը պետք է հաղթանակի մի որ: Արագու հերոսները տողորված են այդ գաղափարով, նրանք զգում են, վոր այդպես չի կարող շարունակվել միշտ:

Սարգիս խեղդվում են «Վանդակներում», այն մեծ բանտում, վոր կոչվում էր ցարական Ռուսաստան: Տանջվում են վոչ միայն բանվորներն ու չքավոր գյուղացիները, այլ և մանր բուրժուական խավերը, տնտեսապես անապահով ինտելիգենտները, ստորին պաշտոնյալները, ծառայողները: Դրանց ներկայացուցիչն է Մելանյանը, հեռագրատան հասարակ ծառայող («Վանդակներում» 1913 թ.): Կյանքը սեղմել է, նրան իր ճիրաններում, դարձրել մարդ-մեքենա աննապատակ և անհեռանկար: Նա չի կարողանում վճռել «գլխավոր հարցը»,—Ում համար ե այս կյանքը՝ վոր յես քարշ եմ տալիս, ասում է նա,—ի՞նչ համար

բայց յես ահա վոչ թե ապրում եմ, այլ մեռնում որեցոր, կնոջս, յերեխաներիս համար, բայց նրանք ել ինձ նման են՝ նույն դալուկ դեմքերը, փշրված սրտերը»:

Սակայն Մելանյանը տեսնում է, վոր կան յերջանիկներ, վորոնց համար է այս կյանքը. ահա նրանք «հարուստ, ջահել ու անհոգ, դալիս են հեռագրատուն ծիծաղելով, կշկշալով, մեկ-մեկու ձեռքից խլում են գրիչը... շուտ-շուտ հեռագիրներ են տալիս, այն ել ինչ զվարճալի ու չնչին բաների մասին. — Շնորհավորում ենք քո անվանակոչությունը: Մենք առողջ ենք: Առողջ է և մեր չարաճճի շնիկը», հեռագրատան «Վանդակների» յետևում խեղդվող Մելանյանը յերագում է հարստության մասին: Սակայն դա մի ցնորք է, վոր յերբեք չի կարող իրագործվել: Հարստանալու համար պետք է ստրկացնել հազարավոր մարդկանց, «խանգարել նրանց ապրելու»: Այո գիտակցությունը մեխվում է Մելանյանի ուղեղում: Նա չի կարող ստրկացնել իր նմաններին, արհամարհել նրանց, վորոնք ձեռները բարձրացրած՝ սպառնադիրն գոչում են. — «Դու, գու, խանգարում ես մեր ապրելուն»:

Յեվ ահա կայծակի նման մի լույս փայլատակում է նրա հոգում: — «Յես ձեզ հետ եմ, հանկարծ գոչում ե նա, յես ել ձեզ հետ եմ — գնանք բոլորս միասին»:

Նոր տարի յե: Մելանյանը նստած է մեքենայի առաջ, վանդակների յետևում, հեռագրեր է ուղարկում աշխարհի շրջա կողմը. «Թվում եր թե դրո՞ւս մոտոջ աղմուկը նրան եյին հանձնել, վոր ղեկա-

վարի: Այդ ժխտումն նրա վառ յերևակացության մեջ
լավում եյին բյուրավոր ամբոխի ծայրեր: Նա չըխ-
չըխկացնում եր՝ շնորհամվոր, շնորհամվոր, շնորհամվոր,
ու թվում եր, թե մի ուրիշ մեծ տոն է յերկրի վրա:
Թե հսկա զանգեր են դողանջում ովկյանից ովկյան
ու ինքը կանգնած բարձր, բարձր մի աշտարակի վրա,
գոչում է բյուրավոր ամբոխին:

— Ուղղիցեք կորացած մեջքերը, ծաղկեցրեք Թա-
ռամած կանաչները: Չկան այլևս վանդակները, դուք
ազատ եք, ազատ...» (Վանդակներում):

Յարական բռնակալության և ոեակցիայի ուժե-
ղացման տարիներում Արաղին գտնում է իր մեջ
բավականաչափ ուժ այդ բռնությունը խորտակելու
կոչ անելու համար. իմպերիալիստական պատերազմի
նախորդակին ել ավելի ուժեղացող նացիոնալիստա-
կան մոլուցքը չի դիպչում Արաղու ստեղծպործու-
թյանը. նա իր գրական բախտն արդեն վերջնակա-
նապես շագկապել եր բանվոր դասակարգի և չքավոր
գյուղացիության ազատագրման գործի հետ: Նա անհամ-
բեր սպասում եր այն որվան, յերբ «կուղղվեն կորա-
ցած մեջքերը», յերբ չեն լինի այլևս «վանդակներ»,
և յերբ հաղթական կամարների տակով մենք կանց-
նենք նոր կյանքի շարքերով...» (Վարմիր համ-
բույր):

Իմպերիալիստական պատերազմի տարիներին
գրված պատմվածքները հանդիսանում են մեր գրա-
կանության հակապատերազմական լավագույն եջերից,
տոգորված հեղափոխական պափքսով և դեպի ապա-
գան ունեցած հավատով: Արաղին յեղբայրության կոչ
է անում թշնամի բանակներում իրար դեմ պատե-

A 6433

3047

բազմոգ աշխատավորներին, վորոնց ռազմադաշտ են
քշել կապիտալիստները վոսկի հորթին զահելու հա-
մար: Դա այն ժամանակն էր, յերբ գրողներէց շատ
քչերն էյին հանդիմում իրենց ձայնը բարձրացնել
այդ մասնայական բնաջնջման, այդ ահաւոր սպան-
դի դեմ: Արազին իր «Կարմիր համբույր» պատ-
մըվածքով (1915 թ.) հանդես ե գալիս վորպէս հե-
ղափոխական խնտերնացիոնալիզմի գաղափարի պաշտ-
պան: Նա հավատում ե, վոր պատերազմի դաշտում
բնկածները «վոտքի կիլնեն ե կըայլեն դեպի քաղաք-
ները քարահատակ... շուրջ ու շրխկոցով կըանան փակ
դռներն ու ներս կտանեն ցրտահար, արյունոտ իրենց
ճշմարտությունը»: Դեռևս այն ժամանակ, յերբ գրող-
ներէց շատերը վաբաւկած ելին շովինիզմի թույ-
նով ե իրենց գրվածքնե ում պաշտպան էյին կանդ-
նում բուրժուական «հայրենիքին», Արազին քարո-
զում ե պատերազմոգ իմպերիալիստական յերկրների
աշխատավորների յեղբայրացոմը, պայքարելով հա-
նուն պրոլետարիատի հաղթանակի:

II

Հաղթանակում ե սոցիալիստական մեծ հեղա-
փոխությունը: Սկսվում ե ե Արազու ստեղծագոր-
ծության ավելի բեղուն ե հետաքրքրական շրջանը:
Հեղափոխությունից առաջ Արազին գրել ե անհամե-
մատ ավելի քիչ: Հոկտեմբերյան մեծ հեղափոխու-
թյունը ե Անդրկովկասի խորհրդայնացումը արձակում
են Արազու ստեղծագործական հնարավորությունները

կաշկանդող կապանքները: Դեռ ավելին. Վրաստանի խորհրդայնացումը նրան ազատում է մենշևիկյան բանտից: Արազին վողջունում է խորհուրդների հաղթանակը: Նա գրում է իր խանդավառ արձակ բանաստեղծութունները նվիրված Փարիզի կոմունային, սկսում է իր առօրյա գրական աշխատանքը և մասնակցությունը խորհրդային գրական կյանքին:

Համեմատաբար կարճ ժամանակաշրջանում Արազին հրատարակում է իր պատմվածքների չորս ժողովածուները, այնուհետև անցնում է ավելի մեծ ծավալի գրվածքներ ստեղծելու գործին («Առանի շողերով», «Զրվեթի ցուլքում»):

1937 թվին լույս տեսավ Արազու յերկերի ժողովածուի առաջին հատորը, վերի մեջ ամփոփված են հեղինակի մի շարք ուշագրավ յերկերը: Միաժամանակ Արազին հանդես է գալիս վորպես մանկական գրող, 1923 թվից սկսած մինչև այսօր: Հայտնի յեն նրա մի շարք պատմվածքները, վորոնք տպագրված են մանկական հանդեսներում կամ առանձին գրքույկներով. ինչպես «Փոքրիկ շինարարները», «Պիոներ Սարոն», «Հերոս Կարենը», «Անբախտ վորականներ» և այլն:

Արազու ստեղծագործական մեթոդի և լեզվի պարզությունն արդեն նրա պատմվածքների մեծ մասը մատչելի յեն դարձնում մանուկ և պատանի ընթերցողներին, Արազին աշակերտներից ամենաօրված գրողներից մեկն է. նրա այժմեական թեմատիկան, անսեթևեթ պարզ ձևը գրավում է ամեն տարիքի ընթերցողի: Անկասկած Արազու վորոշ գրվածքների մեջ դեռևս կան չհաղթահարված վերացա-

կանության տարրեր, սակայն դրանք չեն խախտում նրանց ընդհանուր գեղարվեստականությունը: Արագու կարճ պատմվածքների ուշադրավ առանձնահատկություններից մեկն այն է, վոր դրանք տողորված են ներքին, որպանական խոր լիրիզմով:

Նախահեղափոխական շրջանում այդ լիրիզմը յերբեմն կրում էր թախծոտ, մինոր շեշտեր: Ռեակցիայի, հասարակական տրամադրությունների անկման շրջանը շատերին յենթարկում էր հուսալքման և հոռետեսության: Սակայն Արագին չի ընկել վհատության մեջ. նրա կարճ պատմվածքների լիրիզմը — դա հեղինակի ստեղծագործության հատկանիշներից մեկն է: Հեղափոխությունը նոր շեշտեր և նոր հրնչյուններ է տալիս Արագու ստեղծագործությանը: Կյանքում կատարված վիթխարի տեղաշարժը, սոցիալական և մարդկային նոր հարաբերությունների ստեղծվելը, անցյալի և ներկայի հակադրությունը — այդ բոլորը դրողի համար հանդիսանում են ստեղծագործության անսպառ աղբյուր:

Արագու ուշադրությունը դրավում են նոր կյանքի ցայտուն յերևույթները: Սկզբնական շրջանում Արագին շարունակում է գրել իր կարճ պատմվածքների ձևով, վորոնց մեջ պատկերում է այդ յերևույթները: Չափազանց ուշադրավ են այդ բնույթի մի քանի պատմվածքները. «Անցյալի նիրհը», «Հին ժամացույց» (1922) և այլն, դրանք ավելի շուտ լիրիկական պատկերներ են, մի տեսակ արձակ բանաստեղծություններ, վորոնց մեջ Արագին նուրբ կերպով պատկերում է անցյալի մահացման պրոցեսը, «Եին

մարդկանց», շահագործող դատակարգների վերջին ներկայացուցիչների անհետացումը:

Մի շարք այլ պատմվածքներում Արազին պատկերում ե վոչ միայն այդ մահացումը, այլ և անցյալի մնացորդների պատսվ կամ ակտիվ դիմադրությունը, և այդ դիմադրության ջախջախումը: Այս տեսակետից հետաքրքրական են «Զառուիաթ», «Տեբիլը», «Պատվալոր քաղաքացին» և այլ պատմվածքները: Այստեղ արդեն պետք ե նշել հետաքրքրական մի յերևույթ: Այս պատմվածքները կրում են յերբեմն յուժնորիստական, սատիրական բնույթ և հիշեցնում են Արազու առաջին պատմվածքը, վորի մեջ արտահայտված սատիրական-յուժնորիստական հակումը նորից հանդես ե գալիս հեղինակի ստեղծագործական մեթոդի մեջ: Դա անկասկած հեղափոխության ազդեցության հետևանքն եր:

Յուժնորը Արազու համար ծառայում ե վորպես դենք մերկացնելու կապիտալիզմի մնացորդների հոգերանությունը, քաղբենիական վոչնչությունը, դատակարգային խորթ տրամադրությունները: Դիտելով անցյալի խորթ մնացորդների մահացումը և նրանց դիմադրությունը նոր կյանքին, Արազին կարողանում ե դրսևիորել այդ յերևութի բոցիալական պրմատները: Վորքան չնչին և վոգորմելի յեն թվում այդ «նախկին մարդիկ» այն հոյակապ իրականության հանդես, վոր ստեղծել ե հեղափոխությունը, Պատմվածքների այդ շարքում առանձնապես ուշադրավ ե «Զառուիաթը»: Արազին յուժնորիստական նուրբ շարիխներով մերկացնում ե կապիտալիստների սպառարկու՝ հին ինժեներ Մելիք - Ղահրամանյանի

տիպը, վորը Արազին գծում ե վարպետությամբ: Դա
այն մարդն եր, վոր հեղափոխությունից առաջ իր
տիրոջը՝ կապիտալիստին ասում եր. «Սաղ ուրուց
կըկոտորեմ, թաք քեզ նալթ տամ», իսկ այժմ վոր-
ձում ե հարմարվել նոր կարգերին՝ սակայն զգա-
բանվորները լավ են ճանաչում հին գայլին. «Եդ վոր
կարմիր գալստուկ ես կապել, մթամ գիտում չենք,
տակին ինչ կա» — ասում են նրան: Յեւ «աղա» ինժե-
ներին նստեցնելով «տաշկի» վրա դուրս են բերում
նալթահանքերից:

Սակայն նոր կյանքի հիմնական մոմենտն այն
վիթխարի սոցիալական տեղաշարժն ե, վորը մասսա-
ներին բարձրացնում ե քաղաքական ինքնագիտակ-
ցության մակարդակին: Յերեկվա ճնշված, կեղեքված,
ճխլոված բանվորն ու գյուղացին դառնում են նոր
կյանքի կառուցման հիմնական ուժը: «Ընկեր Մու-
կուչները» «Աչքը վախեցած Հանեաները» — ահա այն
նոր մարդիկ, վորոնք բարձրանում են ցածից, ստա-
նում են մարդկային իրավունքներ, առաջին անգամը
պատմության մեջ գիտակցում են իրենց վորպես ի-
րավազոր մարդ և քաղաքացի:

Կարելի չե ասել, վոր մեր գրականության մեջ
վոչ վոք ավելի ցայտուն կերպով չի տվիլ այդ պրո-
ցեսը, քան Արազին: Նրա «Ընկեր Մուկուչը» և «Աչ-
քը վախեցած Հանեաը» այս տեսակետից կարելի չե
համարել բնորոշ որինակներ: «Ընկեր Մուկուչ»
պատմվածքը Արազին գրել ե 1924 թ. Անդրկովկասի
խորհրդայնացման առաջին տարիներում:

Ո՞վ ե Մուկուչը: Դա մի անգրագետ, գրեթե
անխոս կիսագյուղացի չե, կտրված հողից: Նա ծառա-

յում ե քաղաքում վորպես կաշեգործարանի պահակ։
«Ամեն ինչ փոխվում էր, բացի Մուկուչից»։
Նրա վրա վոչ վոք ուշադրութիւն չի դարձնում, նա
գործարանի անշունչ մասերից մեկն է կարծես։ Սա-
կայն մոտիկից նայողը կարող եր տեսնել նրա «խո-
շոր աչքերի մէջ քաբացած հոգսի ու թախիծի արտա-
հայտութիւնը»։ Կնոջ և չորս յերեխաների ծանր հոգ-
օրն է ճնշում նրան։ Նրա ամբողջ մտահոգութիւնն
ե՛ «հաց, հաց», սովահար ընտանիքի հրամայական
պահանջը։ Նա շարունակ յերազում է հացի մասին։

Յերբ պետական կարգերը փոխվում էյին, նա
որական մի քանի անգամ հարցնում եր սրան-նրան։
— «Դրուստ ամ, ասում են հացը պետք ա եժա-
նացնեն»։

«Յերբ խորհրդային իշխանության որով Մու-
կուչին գործարանի հացը բերող նշանակեցին, ուրա-
խութիւնից նրա լոակյաց լիզուն բացվեց, հենց իմա-
նաս հացի բոլոր բաժիններն ինքը պիտի վերցնե-
րէ մարդ չմնաց, վորին չասեր.— Բանվորի հացը յեռ
պիտի բերեմ»։

Հակառակ իր նոր պաշտոնին՝ Մուկուչը մնում
եր նույնը։ Նա դեռևս չի կարողանում ըմբռնել նոր
կառուցի իմաստը։ Արագին ցայտուն դժերով տալիս
է Մուկուչի հոգեբանության մեջ աստիճանաբար ա-
ռաջ յեկող փոփոխութիւնը։ Նա տեսնում է, վոր
«Բարձրինը ցած է ընկել, ցածրինը բարձրացել»։
Սակայն ինչո՞ւ ինքը մնացել է նույն Մուկուչը,
ինչո՞ւ իրեն «հընկեր» չեն կանչում, ինչո՞ւ գործա-
րանի սափրիչը միշտ Մուկուչին «ցանում ա», յերբ
նա գնում է սափրվելու։ «Մինը հրեն «նախագա» յա»

մինը «քարտուղար» աս, մինը «բճիճ», մինը «տեղ-
կում», բոլորն էլ բանվորներ, իսկ Մուկուչ «խեղճ
մարդ աս, ի՞նչ էլ կմնա...»:

Ճշմարիտ է, Մուկուչը գիտե, վոր «բանվոր ե
կա, բանվոր եմ», սակայն նա լավ չի ըմբռնում վո-
րակյալ գիտակից ու դեռ անգիտակից բանվորի միջև
յեղած տարբերությունը: Մուկուչի արտադրության
գործիքը նրա ավելն է, իսկ մտավոր ամբողջ շահա-
գրը գոությունը կապված է իր հացի պարկի հետ:
Նրա համար հասարակական աշխատանքը, ժողովները
լոկ ավելորդ ժամալաճառություն են:

Սակայն մի դեպք պա՛խ է նրան դուրս բերելու
մտավոր անշարժությունից և պասսիվությունից: Մի
առավոտ պարզվում է, վոր գործալանի պահեռայից մի
կապոց կաշի յեն գողացել: Նոր կառավարիչը, հին
կարգերի պաշտպան մի մարդ, Մուկուչին սեղադրում
է գողության մեջ: Նա զազազած առում է Մուկուչին.
«Պահապան ես, ուրեմն մեղավոր ես»: Զրպարտությու-
նը ծանր ճնշում է Մուկուչի ուսերին:

«Որը միջնում է, Մուկուչի սիրտն էլ նրա հետ»:
Բնազդարար նա զգում է, վոր գողությունը կատար-
ված է ներսից: Նա կասկածում է, և չի սխալվում,
վոր գործարանի սափրիչն է գողը: Չէ՞ վոր իրեն
հայտնի յեն սափրիչ Բախշոյի արածները. «Պե Մու-
կուչը հո քոռ չի, տեսնում ա՛ վհից ա եղ փուչ Բախ-
շոն նոր առած ածելիները փոխում իր սեփական
հների հետ: Գողանում է գողնոցի ու յերեսարիչի
համար տված կտորներից»: Նա գիտե, վոր այդ ժու-
լիկ մարդը «խորհրդային» սափրիչ է դառել, վոր իբ
սեփական գործերը դրստի, սարքը գողանա ու հետո

իր համար ջուկ արհեստանոց բաց անի»։ Նա տեսնում էր թե ինչպես բախրիչը քշվիչում է կառավարչի ականջին և ահա նրա յերեակայության մեջ պատկերանում են հարյուրավոր սափրիչներ ու կառավարիչներ, վորոնք մեծ-մեծ անկիւններ առած գալիս են իրան մորթելու)։

Գործարանային ժողովը քննում է գործը, հայտաբերվում է իտիական հանցավորը։ Մուկուչը շմամ է, նա չի հասկանում ժողովում կատարվածը։ Հանկարծ ամենքը նրան են դիմում «Ըսկեր Մուկուչ, ընկեր Մուկուչ» կանչելով, շրջապատում նրան, շնորհավորում։

«— Հընկեր Մուկուչ, քեփդ քյոք պահիր, յետեիդ սարի նման կաղնած ենք»։

Գործարանային միաձուլ կուլեկտիվը հուժկու քաղուկներով Մուկուչին դուրս է քաշում իր թմբած, անխմած գոյությունից, բարձրացնում «խեղեղան մարդու» աստիճանին։ Կատարվում է վճռական բեկումը։ Մուկուչը առաջին անգամն իր կյանքում դգում է, վոր ինքն ել մյուսների նման բանվորական մեծ ընտանիքի անդամ է, վոր նա այլևս այն մոռացված, արհամարհված, գրեթե կիսավայրենի արարածը չէ, այլ «ասես մեծանում է, աժգահա յե դառնում, բարձրանում է, կոները լցվում են արյունով, ու հըպարտ-հպարտ նա կանչում է, իմաց անում բոլորին»։

«— Հէյ լավ իմացեք, սրանից դ'նը ել ինձ վոչ մի բան չի հաղթիլ»։

Անցել է յերեք տարի։ Ահա նույն գործարանը, վորտեղ աշխատում է Մուկուչը, Բանվորական կուլեկտիվի ժողով է հրավիրված քաղաքական մի կարևոր

հարցի առթիվ, իրար հետևից հանդես են գալիս բանվորները: Նրանք խոսում են սոցիալիստական յերկրի որեցոր մեծացող նվաճումների մասին, Խորհրդային Միության անպարտելի ուժի մասին: Հանկարծ նախագահող բանվոր Սահակը հայտարարում է. Խոսքը պատկանում է ընկեր Մուկուչին:

Հեղինակը նկարագրում է, թե ինչպես ամբիոն է բարձրանում մագերը կարճ խուզած, յերեսը ածիլած մի բանվոր և սկսում է խոսել հուզված շեշտերով, նա խոսում է այն մասին, վոր այլևս վոչ մի ուժ աշխարհում չի կարող հաղթել բանվորների ու գյուղացիների մեծ պետությունը: Դահլիճում թնդում են ծափահարությունները: Հեղինակը հարց է տալիս, ով է այս բանվորը, նրան պատասխանում են, վոր դա նախկին Մուկուչն է: Ահա նա իր ճառը վերջացնում է հետևյալ խոսքերով. «Ել սրանից դենը մեզ վոչ մի բան չի հաղթիլ»:

Ուրեմն սա յե այն անխոս ու յերկշոտ Մուկուչը: «Ինչպես թե, բա ուր գնացին նրա խոսքն միրուքը, նրա փթանոց կոշիկները,—հարց է տալիս հեղինակը»:

Հենց այդ է խնդիրը, «Անփոփոխելի» Մուկուչը յենթարկվել է արմատական փոփոխություն: «Մուկուչի նշանավոր կոշիկները և հացի պարկը մուգեյ ենք ուղարկել»—պատասխանում են հեղինակին:

Այս կատակը ստանում է հատուկ իմաստ: Այդ անշունչ իրերը իմաստավորվում են վորպես նախկին Մուկուչներից անբաժան հատկանիշներ, անվերադարձ անցյալի սիմվոլները: Հեղափոխությունը միայն կարող եր կատարել այդ հրաշքը: Իսկ Մուկուչի մեջ կատարված փոփոխությունը բնորոշ է հոկայական

դանդվածներին համար, վերոնց բարձրացրեց հեղափոխությունը իրավագոր մարդկանց աստիճանին։ Արագին դեռևս 1924 թ. գրած իր այս և մի շարք այլ պատմվածքներում ուսուցիչներն մոտենալով մեր եպոխայի այս նշանավորագույն խնդրին՝ կառողացել և գեղարվեստական պատկերների, տիպական խառակտերների միջոցով ցույց տալ այդ պրոցեսը։

Մուկուշի մի այլ տարբերակն է Հանեսը, չքավոր գյուղացի, փոքր հասակից բատրակ հարուստ աղայի մոտ, ճնշված, ճզմված աշխարհի զորեղների կողմից։ Նա անգոր է նրանց դեմ, տգետ է, գրեթե կոսավայրենի, քաշ է տալիս մի կյանք, վոր քիչ է տարբերվում անասնականից։ Նրան ծեծում են ու նախատում, ծաղրում և արհամարհում։

Փոքր հասակից մայրը ներշնչել է նրան հնադանդ լինել մեծերին, հարուստներին, գլուխ չդնել զուրաների հետ, թե չէ վաճ նրան։ Յ՝վ Հանեսը վախեցած է, և փոքրուց, նրան տվել են «Աչքը վախեցած Հանես» մականունը։

Վրա յի հասնում պատերազմը, հետո հեղափոխությունը։ Հանեսը, ինչպես և նման շատերը, չի կարողանում ըմբռնել կատարվող իրադարձությունների իմաստը։ Սակայն նա իր աչքով տեսնում է, վոր իրոք փոխվում է աշխարհը, վոր բոլշևիկները պաշտպանում են չքավորներին ու բատրակներին կուլակների ու հարուստների դեմ, վերցնում են նրանց լավ հողերը և տալիս չքավորներին։ Իրեն ել բաժին է ընկնում իր նախկին աղայի՝ Մաթոսանց Սիմոնի հողից։ Սակայն հեղափոխության առաջին տարիներն են, յերբ կուլակը դեռևս տնտեսապես ի-

րենս գործել և զգուճման: Մաթոսանց Սիմոնը չի կարողա-
նում հաշտվել այն մտքի հետ, վոր իր «սեփական»
հողը տալիս են իր նախկին բատրակին, այն քաղցած,
տկուր խեղճ ու կրակ արարածին, վոր «արսափում
եր իրենից»:

Դազազած Սիմոնը փորձում և կրկին «վախեց-
նել» Հանեսին, վորպեսզի «ա ձեռք վերցնի նրա
հողից: Հանեսը այս անգամ համառում և, նա վճռում
և պաշտպանել իր «տաշած իրավունքները: Սակայն
նա մենակ անգոր և դեռևս ուժեղ կուլակի դեմ: Վեր-
ջինս իր վորդու հետ միասին դաշտում հարձակվում
են Հանեսի վրա և խլում են նրա հնձած խոտը:
Հանեսը բողբոժում և գյուղի հեղկոմին: Հանեսի մըտ-
քում կասկածներ են ծագում խորհրդային իշխա-
նության գյուղական ներկայացուչ իշների վարքագծի
վերաբերմամբ: Ինչո՞ւ նրանք ավելի վճռական չեն
կուլակների հանդեպ, վախենում են, ի՞նչ և: Կուլակը
շարունակում և իր ուպառնալիքները: Հանեսն իր ցա-
վի մասին պատմում և գյուղի նոր նշանակված կոմի-
տարին, վորը համագյուղացի նախկին կարմիր-բա-
նակային և և մասնակցել և քաղաքացիական կռիվ-
ներին: Կոմիտարը ծիծաղում և Հանեսի վախկոտու-
թյան վրա: Ի՞նչ տղամարդ ես դու, առում և նրան:
Նախկին կարմիր-բանակայինը չի կարողանում պատ-
կերացնել, վոր կուլակը խորհրդային կարգերի որով
կարող և հանդգնել դուրս գալու պրոլետարական հե-
ղափոխության դեմ: Նա չի ըմբռնում, վոր դասա-
կարգային ուլաքարն այժմ փոխել և իր ձեռք, նա
կարծում և, վոր թշնամին արդեն վերջնականապես
ջախջախված և քաղաքացիական բաց մարտերում:

Անտահման հավատ ունենալով դեպի հեղափոխութեան ուժը, կոմիտարը Հանեսին տալիս է իր զինվորական սաղավարտը, փորպետի նա տնկի այդ սաղավարտն իր արտում՝ Մաթոսանց Սիմոնին վախեցնելու համար։ Թերևս դա կատակ էր կոմիտարի կողմից, սակայն Հանեսը լուրջ է ընդունում այդ կարմիր-բանակային սաղավարտը (շեմ) նրա աչքին դառնում է հեղափոխութեան սիմվոլ, այն հեղափոխութեան, վորը յիկել էր նոր կարգեր հաստատելու գյուղում, ազատելու չքավորներին կուլակների կեղեքումից։

Մաթոսանց կուլակ Սիմոնի և չքավոր գյուղացի Հանեսի միջև մղված խուլ պայքարն ունենում է դրամատիկ վերջավորութեան։ Յերբ զազազած Սիմոնը հարձակվելով Հանեսի վրա միաժամանակ ուզում է պոկել արտում տնկված սաղավարտը՝ Հանեսը սպանում է նրան։

Սա մի անսպասելի ակտ էր «աչքը վախեցած» Հանեսի համար, սակայն հեղինակը համոզում է ընթերցողին, ռեալիստորեն պատճառաբանելով այդ ակտը՝ պատմվածքում զարգացող գործողութեաններով։ Բընորոշն այն է, վոր Հանեսը կատարելով այդ սպանութեանը զգում է իրեն մի ծանր բեռից թեթևացած։ Յեվ յեթե այդ ընկերին մոտենային նրան և հարցաքննեյին,—ասում է հեղինակը,—Հանեսը գիտեր թե ինչ պիտի պատասխաներ,—«Յեռ եմ սպանել և յեթե վեր կենա, նորից կսպանեմ»։

Արադին ճանաչում է հին, սեփականատիրական գյուղը, վորտեղ իշխում էյին Շշահագործող—կուլակը, արյունարբու—վաշխառուն, սպեկուլյանտ—վաճառա-

ռազմանը, տերտեր—ուրյադնիկը» (Ստալին), վորտեղ մասնավոր սեփականատիրական հոգեբանությունը մարդկանց մոջ ստանում եր բիրտ, այլանդակ ձևեր, վորտեղ «ջրի կռիվը» վերջանում եր յերբեմն իսկական արյունահեղությամբ, վորտեղ չքավորության անասելի կեղեքման միջոցով ստեղծվում եր գյուղական սարդ հարուստի կարողությունը։ Սեփականատիրական հոգեբանության մարմնացումն է հանդիսանում «Փուշ Աբելը»։

Ահա մեր առաջ պատկերանում է գյուղական հարուստի՝ կուլակի տիպը, վորն իր դասակարգի հատկանիշների խտացումն է։ Սա մի ամբողջ սոցիալական խարակտեր է, վոր Արադին նկարում է, բալզակյան տիպերին բնորոշ գծերով։ Գյուղական այս հարուստի սեփականատիրական զգացմունքը հասնում է մոլեգնության աստիճանի։ Նա փշի բարձր ցանկապատով պատել է իր խորհրդավոր այգին, և յեթե «ձեռքից գա՝ յերկնքի կողմից ել կլափարի իր բաղը»։ Աբելը ծայր աստիճանի կասկածամիտ է, վոխակալ, անտեղի վրիժառու «յերեկելի և աներևույթ» գողերից, փողոցի պատահական անցորդներից։ «Յեթե հնար լիներ, նա հազար դամբու բաց կթողներ այդ հանդուգն մարդկանց գլեղը, խեղդելու համար»։ Նա իր շանն ավելի յե սիրում, քան իր զավակներին։ Իր սեփականատիրական այդ մոլեգին զգացմունքը Աբելին դարձնում է դեպոտ, դաժան, կռվարար, իր սեփական ընտանիքում իսկ։ Նա տանջում է իր կնոջը՝ Թե Էինչձև յեն հաց տվել աղքատին, ինչձև շանը չեն նայել» և այլն։

Յեվ ահա մի որ բուլեիկները վերոշում են վերց-

նեղ նրա այգին և տալ գյուղի դպրոցին: Նա կատաղի
 դիմադրություն ե ցույց տալիս. Արեւը չի կարող
 յերբեք հաշտվել այն մտքի հետ, վոր «իր» այգին
 այլևս «իրենը» չէ: Նա մոտենում ե «իր» այգուն և
 դարմանում, վոր այդ ցանկապատն այժմ իր տի-
 րոջ դեմ և, իրեն ներս չի թողնում... «Ի՞նչ անի, կոտորի՞
 դուռը, պատռի չափարը... ավելի շուտ ժամ կկողոպտի,
 քան թե իր չափարի վրայով կանցնի»: Յերբ կիսա-
 խելագար Արեւը տարված իր սեփականությունը
 վերադարձնելու սևեռուն զաղափարով վորոշում ե
 գնալ և դանդառվել Լենինին, մենք զգում ենք դրու-
 թյան վողջ կոմիկականությունը: Արագին արտա-
 քուստ մեզմ յուսմորի վարագույրի տակ տալիս ե սո-
 ցիալական սատիրա, մերկացնելով մասնավոր սեփա-
 կանատիրոջ դասակարգային եյությունը:

Արագին նկարել ե «տիպիկ մի խարակտեր տի-
 պիկ հանգամանքներում», դեղարվեստորեն կատարե-
 լով սոցիալիստական ռեալիզմի այդ կարևոր պա-
 հանջներից մեկը:

Արագին իր մի շարք այլ պատմվածքներում
 տալիս ե դասակարգային պայքարի տարբեր մոմենտ-
 ները քաղաքի և գյուղի սոցիալիստական վերակա-
 ուցման ֆոնի վրա: «Աչքը վախեցած Հանեսը»,
 «Լույսերը», «Հաղար գլխանի» և այլ մի շարք պատ-
 մրվածքներ ցույց են տալիս, վոր հեղինակն ըմբռ-
 նելով յերկրում կատարվող տեղաշարժերի եյու-
 թյունը, կարողանում ե կատարել տիպական ընդհան-
 րացումներ, առանց շաբլոնի և սխեմատիզմի, զար-
 մանալի պարզությամբ, տալ իրականության զար-

գացման տենդենցները, յերբեմն հասնելով հմոցիոնապաֆոսի, առողջ ռումանտիկայի:

Այդպիսի պաֆոսով և գրված որինակ «Լույսեր» պատմվածքը, վորն ավելի շուտ նման է արձակ պոեմի: Այստեղ առանց շեշտված «բանաստեղծական» և արհեստական ճիգի, Արազին յերգում և հիգրոկայանի կառուցման թունելներում գիշեր ու ցերեկ յեռացող աշխատանքը: Պատմվածքի սկզբում հեղինակը տալիս և լույսերի հմայքը, նրանց խաղը գիշերվա խափարում:

Ամայի, անդնդախոր ձորում կառուցվող հիգրոկայանի հերթափոխ բանվորները վերադառնում են աշխատանքից իրենց լապտերներով: Հեռվում կայծկըլտում են բանվորական շինքերի ելեկտրական լույսերը վորոնք ամեն գիշեր «պայծառ ու զվարթ շարվում են... և ուրախ ցղքերով ասես կանչում են նայողներին»:

Ահա բանվորներն իրենց լապտերներով: «Ջորհրդավոր են թափնող այդ լույսերը, նրանք մերթ ծածկըվում են ժայռերի հետևում, մերթ նորից հայտնվում: Յեվ թվում և հեռվից, թե մարդիկ չեն շարժվողները—այլ լույսերն են թռվում հսկա լուսատիտիկների նման—ոձապտույտ կածանների վրայով»:

Այնուհետև Արազին լույսերի այս սիմվոլիկական պատկերացման ֆոնի վրա ուրվադժում և մութ ուժերի, դասակարգային թշնամու դավադրությունը բոլշևիկ բանվոր Ակոբի դեմ:

Ակոբը Բագվից յեկած բանվոր է, վորը դարձել և գյուղի սոցիալիստական վերակառուցման, կոլտնտեսային շինարարության ենտուղիառու: Կուլակներն ատում են նրան, ինչպես վոխերիմ թշնամու, նրանք

մահափորձ են կազմակերպում Ակոբի վրա և վիրավորում են նրան:

Պետք է առել, վոր Արաղին այստեղ չի կոնկրետացնում յերևույթները, չի տալիս գյուղի սոցիալական ունի հարաբերությունները, պատմվածքի բնույթը կարծես այդ չի պահանջում: Յեւ այդպես էլ ե: Հեղինակը տալիս է յերևույթի սիմվոլական ընդհանրացումը՝ լույսի և խավարի հակադրման միջոցով: Սոցիալիզմի լույսերն են, վոր զալիս են լուսավորելու գյուղի խավարը, իսկ դասակարգային թշնամին փորձում է մարել այդ լույսերը: Վիրավոր Ակոբը տենդային յերազի մեջ տեսնում է լենինին և խոստանում է նրան մինչև վերջը պայքարել այդ խավար ուժերի դեմ, վորոնք ուղղում են մթազնել գյուղի սոցիալիստական վերակառուցման լուսավոր ճանապարհը:

Սոցիալական ավելի կոնկրետ հարաբերություններ մենք տեսնում ենք «Հազար գլխանի» պատմվածքում: Այստեղ Արաղին մերկացնում է, դիմակաղերծ է անում դասակարգային թշնամուն և նրա գործակալ ոպորտունիստ Մինասին, վորոնք ամեն կերպ աշխատում են խափանել, խոչընդոտ լինել կոլտնտեսային շինարարությանը և այդ նպատակով խծկվում են կոլտնտեսության մեջ այն ներսից պայթեցնելու համար:

Արաղին այս պատմվածքը գրել է 1931 թվին, սակայն նա կարողացել է դեռևս այն ժամանակ նկատել դասակարգային թշնամու այդ նոր մանյովրը, նրա դիմադրության նոր մեթոդները: Արաղին վերջընում է կոլտնտեսային շարժման այն հոսսը,

յերբ կոլտնտեսությունները տնտեսապէս և քաղաքա-
կանապէս դեռ չեյին ամբողջովի հասկապես մեր
Միութեան ծայրամասերում, յերբ դասակարգային
թշնամին՝ կուլակը կարողացել էր տեղ-տեղ իր ազնե-
տուրան ունենալ նույնիսկ այնպիսի մի կարևոր պո-
տում, ինչպես ին կոլտնտեսութեան նախագահի պոստն է:

Այդպիսի մի գործակալ է Մինասը, վորը լինե-
լով կոլտնտեսութեան նախագահ, սերտ կապեր ունի
գյուղի կուլակների, նրանց զխափոր Առաքել աղայի
հետ: Նա խորհրդակցելով կոլտնտեսութեան մասին
Առաքել աղայի հետ, ասում է նրան, ... «Են ել քեզ
հայտնի աս, Առաքել ապի, կոլխոդի՝ մասին խորհուրդ
արինք, ասինք,— քանի վոր եդ կոլխոդ ասած ցավը
մեզ մօտ ել աս գալու, պետք է մեջը մեր մարդն ու-
նենանք, վոր գործը քանդի, իսկ թե բան աս, չկարո-
ղանա, գոնյա ձգձգի, հարամ անի»:

Այս պատմվածքում Արադին տալիս է դասա-
կարգային պայքարի բնորոշ մոմենտներից մեկը
գյուղում: Կուլակի գործակալ Մինասը մերկացվում է
նախկին չքավոր, ակտիվ կոլտնտեսական Բենոյի
ջանքերով, վորին ոժանդակում է ամբողջ կոլեկտիվը:
Բենոն՝ դա նույն Հանեսն է, նույն «ընկեր Մուկուչը»,
վորը հասել է իր դասակարգային շահերի գիտակցու-
թեանը, կարողացել է հաղթահարել իր մասնավոր-
սեփականատիրական բնութայունը և ըմբռնել է կոլ-
տնտեսային կարգերի նշանակութունը:

Նախկին չքավորը, վորին գյուղում «կանդիտատ»
ծաղրական մականուն են տվել, այժմ դարձել է ակ-
տիվ նախաձեռնող, հասարակական շահերի համար
պայքարող կոլտնտեսական, վորը գիտակցում է կո-

լեկտիվի ուժը, գիտե՛ք, վոր ինքն այժմ վոչ թե մեկ, այլ «հազար գլուխ» ունի: Այս և պատմվածքի գաղափարը, վոր Արազին կոնկրետացրել և գեղարվեստական պարզ, տիպական պատկերների մեջ: Հաղթանակում և կոլեկտիվ աշխատանքի գաղափարը: Ամբողջ գյուղը միահամուռ ջանքերով ձեռնարկում և ջրանցքի կառուցման: Պատմվածքը վերջանում և հաղթական, ուրախ ակկորդներով վորպե՞ս կոլեկտիվ, ողջիւլիստական աշխատանքի սիմֆոնիա:

III

Յեթե համեմատելու լինենք Արազու ոկըզքական շրջանի կարճ նովելները նոր շրջանի պատմվածքների հետ՝ չենք կարող չարձանագրել գրողի ստեղծագործական անընդհատ աճման փաստը: Այժմ նա տալիս և կոնկրետ խարակտերներ և տիպեր, վորոնք հանդես են գալիս, դրսևորվում են իրական, տիպիկ հանգամանքներում, գործողության մեջ: Նրա անձնավորություններն իրական են, կենդանի, անհատականացված, բայց և այնպե՞ս միաժամանակ տիպական են, ոժտված ողջիւլիսական հատկանիշներով:

Արազու ռեալիստական մեթոդի առանձնահատկություններից մեկն և պատկերացման պարզությունը: Այդ պարզությունը հաճախ մակերեսային ընթերցողից թազցնում և պատկերացված յերեվուլթի խորությունը, պատկերի ներքին իմաստը, վոր հաճախ հեղինակը տալիս և լայն ընդհանրացման միջոցով: Արազին իր ռեալիստական մեթոդին վարպետորեն, որգանապե՞ս միախառնում և յերբեմն հեղափոխական ուժանափակայի և սիմվոլիկայի տարրեր, վորոնք հարստացնում են

նրա հիմնական մեթոդը և նշում են այն ուղիներից մեկը, վոր տանում է դեպի սոցիալիստական ուղիղմի վոճի օտեղծումը: Քչերին է հաջողվում լուծել այս դժվարին խնդիրը, առանց ընկնելու ծայրահեղությունների մեջ:

Արադին ունի գեղարվեստական չափի զգացում և տակտ, վոր նրան հնարավորություն է տալիս նույնիսկ ամենադժվար թեմաներ վերցնելիս, խուսափել յերկու գլխավոր վտանգից՝ նատուրալիզմից և ռիսմատիկ, հռետորական ոտմանտիզմից: Արադու ստեղծագործական մեթոդի հիմնական հատկանիշը՝ պարզությունը—նրան հասկանալի յե դարձնում ընթերցողների ամենալայն մասեաների համար, առանց փառելու իդեայի խորությունը:

Արադին չի օիրում օտեղծել արհեստական բարդություններ ինչ վոր—«նովատորության» ձգտումով, կիրառել ձևական, ինքնանպատակ հնարներ զուտ արտաքին եֆֆեկտի հասնելու նպատակով: Սակայն նա կարողանում է հասնել հաճախ բարձր եֆֆեկտի անօպասելի կերպով՝ լոկ մի ֆրազի միջոցով, առանց ճիգի և հռետորական «ֆրազի», մի եֆֆեկտ, վոր հազեցված է ներքին խոր բովանդակությամբ: Որինակի համար հիշենք հետևյալ ֆրազը «Կարմիր համբույրը» պատմվածքից.

— «Հարգենք, ով անգղ, դեպի մարդկային ուղեղը...»:

Սա այն սպառված եֆֆեկտը չե, վորին հասնելու համար յերբեմն հեղինակը կիրառում է հատկապես վորոշ ձևեր, նախապատրաստելով ընթերցողին ընդունելու այդ վորպես գրական վարպետության մի փայ-

լատակում՝ վորպես արտաքին որոնամենա գլխածքը
գեղեցկացնելու համար: Արազին խուճափում ե ար-
տաքին փայլից, նա կարծես ունի վարպետի պրոֆես-
իոնալ այն համեստությունը, վոր նրան հարկադրում
ե հրաժարվել բառերի շռայլումից, ինքնանպատակ
ստիլիզացիայից և լեզվական որոնամենտիկալից: Սա-
կայն չնայած այդ բոլորին Արազուն կարելի չե հա-
մարել ձևի նովատոր:

Արազին կարողանում ե յերևույթները գիտել
յուրահատուկ կերպով և նրանց ներքին իմաստը
դրսևորել վոչ կաղապարված, շտամպի վերածված
պատկերների միջոցով, այլ ինքնուրույն, թարմ հը-
ղացումների, ըստ յերևույթին շատ պարզ, բայց ներ-
քուստ խոր և ընդհանրացված պատկերների միջոցով:

Այդպիսի ընդհանրացված պատկերը սիմվոլ ե
դառնում, որինակ արծաթի ծանրության տակ ձգմված
մշակի պատկերը («Արծաթի տակ»): Դա իմպերիալիս-
տական կապիտալի (անգլիական բանկի) կրունկների
տակ ճնշված գաղութային բազմամիլիոն աշխատա-
վորությունն ե, վորի ներկայացուցիչը՝ պարսիկ աժ-
դահա Հասանը փողի պարկի ծանր բեռան տակ ընկ-
նում ե անշունչ՝ «բանկի սանդուխքների վրա, վոր-
պես մի զոհ հին մեհյանների առաջ»: Արազին այս-
տեղ հասնում ե եմոցիոնալ ներգործության մեծ ուժի,
յերբ անսպասելի կերպով բերում ե կլասիկ դարերից
մի պատկեր, մի համեմատություն, ըստ յերևույթին
բարձր վոճի, սակայն կարողանում ե ոգտագործել
այդ համեմատությունն այնպես պարզ ու բնական
ձևով, վոր վոչ մի խորթ կամ կեղծ նոտա չի խախ-
տում վոճի որդանական ամբողջությունը:

Սակայն Արաղին միորինակ գրող է, բարձր եմոցիոնալ հագեցվածութեան կողքին նա ունի յումորի տաղանդն ու օտարական մտեցման հատկութիւնը, յերբ նա մերկացնում է անցյալից մնացած դասակարգայնորեն խորթ յերևույթները, մասնավորապէս փականատիրական, բուրժուական հասարակութիւնից ժողանդութիւն մնացած հոգեբանութիւնը, մանրբուրժուական նեղ մտայնութիւնը, քաղքենիութիւնը: Այստեղ Արաղու ծաղրը հաճախ սպանիչ է, սակայն առանց մաղձոտ կամ թունոտ լինելու:

Արաղին ունի մի շարք պատմվածքներ, վորոնց մեջ պատկերացնում է «նախկին մարդկանց» հոգեբանութիւնը: Դրանցից մեկն է «Հարմարյանի հուշատետրից» պատմվածքը: Այդ պատմվածքում, վոր գրված է հուշատետրի ձևով, Արաղին վարպետորեն տիպականացրել է մանրբուրժուական հոգեբանութեան տեր մի խնտելիզենտի՝ խորհրդային ծառայողի խարակտերը:

Դա հարմարվող քաղքենու, ոպորտունիստի մի տիպ է, վոր նկարված է կենցաղային-հոգեբանական ֆոնի վրա: Արաղին տալիս է մի ամբողջ խարակտեր «տիեզերական քաղքենու», վորը վորոնում է «հոգու հարմոնիա», ընդունում է «նուշխիսկ սոցիալիզմը վորպէս ապագայի մեծ հարմոնիա», միայն թե վախենում է «այդ մեծ հարմոնիայի ճանապարհին կորցնել իր փոքրիկ «հարմոնիան», իր ընտանեկան իդիլիան, իր Մարգոյին», վորը, ի դեպ ասենք, դավաճանում է ամուսնուն:

Դրութեան կոմիզմը հեղինակն ընգծում է այնպիսի նուրբ իրոնիայով, վորն ամբողջովին մերկաց-

նում եւ «տիեզերական քաղքենիության» հոգեկան
ամբողջ վոչնչությունը:

Արազին յերբեմն իր անձնավորություններին
ոժտում եւ այնպիսի անուններով, վորոնք իրենց իմաս-
տով ծառայում են վորպէս խարակտերիստիկայի մի-
ջոց: Անկասկած առ խարակտերիստիկայի արտաքին
հնարք եւ, վոր Արազին կիրառում եւ զգուշությամբ,
առանց ընկնելու կոմեդիական կարգի ծայրահեղու-
թյան մեջ: Որինակ մեր հիշատակած վերջին պատմը-
վածքի հերոսը կրում եւ Հարմարյան անունը, վոր
լրացնում եւ տիպի խարակտերիստական: Նույնն եւ
նաեւ «Հազար գլխանի» պատմվածքի յերկու հերոսների
վերաբերմամբ, վորոնց անուններն ըստ իմաստի ծա-
ռայում են շեշտելու նրանց խարակտերիստիկան,
դրանք են Գառնակերյանը եւ Հացիկյանը: Յերկու
անուններն եւ համապատասխանում են իրենց կրող-
ների խարակտերիստիկային՝ Գառնակերյանը մեծ
կալիբրի գիշատիչ եւ ֆնառարար, դառակարգային
թշնամու ակտիվ ագենտ, Հացիկյանը՝ առաջինի գոր-
ծակիցը, վախկոտ ոպորտունիստ, «համեստ» ֆնասարար:

Այս տեսակետից եւ Արազին ոգտազործում եւ
կլասիկներին (Գողով, Դոստոևսկի, Շչեդրին) բնու-
թագրման այդ յեղանակը կիրառելով, սակայն նա
այդ անում եւ չափի զգացումով, առանց ընկնելու
ֆարսային գրոտեսկի մեջ, վորով յումորը չի կորց-
նում իր ռեալիստական ֆունկցիան եւ հնարքը հան-
դես չի գալիս վորպէս հատկապէս ընդգծված արտա-
քին եֆֆեկտ:

Պետք եւ նկատի ունենալ, վոր այս հնարքը հե-
ղինակը կիրառում եւ բացառական անձնավորություն-

ներքի վերաբերմամբ, միանգամայն արդարացնելով նրա
գործածությունը յուժնորական-կոմիկական պլանի վրա:

Մենք արդէն նշեցինք, վոր Արազին առաջին
անգամ գրականության մեջ հանդես ելելու սատի-
րական-յուժնորիստական մի գրվածքով: Հեղափոխու-
թյունից հետո Արազին ավելի ևս զարգացնում ելր
ստեղծագործության այդ առանձնահատկությունը,
վորն առհասարակ վորեւէ մի գրողի լավագույն հատ-
կություններէց մեկն է: Մ. Գորկին պատմում է,
թե ինչպես կորուսնկոն հենց սկզբից նկատում և գնա-
հատում է նրա յուժնորը. դա մի հատկություն է, վոր
առանձին գրավչություն եւ տալիս գրողին և վաստա-
կում է ընթերցողի համակրանքը:

Յուժնորի միջոցով թեթեւ կերպով ծաղրվում են կյան-
քի բացասական կողմերը, մարդկանց թերություննե-
րը և հիմարությունները, սակայն յերբ խոսքը վերաբե-
րում է մարդկության թշնամիներին, այդ յուժնորը դառ-
նում է սպանիչ, վերածվում է խայթող սատիրայի. սա
արդէն սովորական իմաստով յուժնոր է, այլ սարկազմ:

Արագու Վոճին ավելի հատուկ է յուժնորը, վորը
նա նրբությամբ կիրառում է կյանքի բացասական
յերևույթները մերկացնելու համար: Արագու մոտ
զարմանալի ներդաշնակությամբ միախառնվում են
լիրիկան և յուժնորը, խորքում պահպանելով հեղինակի
ռեալիստական հիմնական յերանգը:

Մ. Գորկու ուրինակը հսկայական նշանակություն
է ունեցել հեղափոխական պրոլետարական գրականու-
թյան հետևորդների աճման և զարգացման մեջ:
Անփասելի չէ պրոլետարական սոցիալիստական
գրականության հիմնադրի դերը Արագու ստեղ-
ծագործական մեթոդի կազմավորման գործում:

Հայտնի յե, վոր դեռևս հեղափոխությունից առաջ Մ. Գորկին քաջալերում և խրախուսում եր պրոլետարիատի շարքերից դուրս յիկած, ինչպես և նրա շարքերում աշխատող բանվոր գրողների գրական փորձերը։ Նրա նախաձեռնությամբ և խմբագրությամբ և հրատարակված պրոլետարական գրողների յերկերի առաջին ժողովածուները։ Մ. Գորկու որինակը վոգեփորության աղբյուր և դառնում գրական նոր, պրոլետարական ուղղությանը հետևող յերիտասարդների համար։ Այդ մեծ որինակը չեր կարող չվոգևորել և Արազուն, վորն ինչպես հայտնի յե, 1914 թ. պրոլետարական խոշոր պոետ Հակոբ Հակոբյանի հետ խմբագրում և «Կարմիր մեխակներ» և «Բանվորի ալբոմը» ժողովածուները։

Մենք արդեն տեսանք, վոր այլաբանական ձևը ոգտագործելու հարցում Արազին նույնպես հետևել և Մ. Գորկու տրադիցիային, հայտնի յե, թե հեղափոխական ինչպիսի խոր բովանդակությամբ և տոգորված Մ. Գորկու այլաբանական-սիմվոլական արձակ բանաստեղծությունները, պատմվածքները և հեքիաթները։ Արազու մոտ, ի հարկե, հեղափոխական պաֆոսը, պայքարի թափը հանդես չեն գալիս այնպիսի ուժգնությամբ, ինչպես պրոլետարիատի մեծ արվեստագետի մոտ։ Արազու բնույթին ավելի հատուկ և մեղմությունը, լիրիկական թախիծը, վոր նա զգում և տեսնելով մարդկանց տառապանքները («Արյունոտ ծաղիկներ», «Արև», «Վերջին տերևը» և այլն)։ սակայն Արազու մոտ վիրշոն ու թախիծը յերբեք չեն հասնում վհատության, ընդհակառակը, նա հավատում և պայծառ ապագային, նա չի տրտնջում և թախծում

ինդիվիդուալիստ և սիմվոլիստ պոետների պես, վորոնք հանդիսանում եյին բուրժուական դեկադենսի տիպիկ ներկայացուցիչները:

Արագու ստեղծագործության այս բնույթը ավելի նկատելի յե 1905 թ. հեղափոխության պարտությանը հաջորդող ռեակցիայի տարիներին: Հոկտեմբերյան մեծ հեղափոխության հաղթանակից հետո, ինչպես տեսնում եք, նրա այդ լիրիկական թախիժը, մինոր տոնը վերանում են և նրանց հաջորդում են կայտառ և զվարթ ակկորդներ. հեղափոխությունը հեղաշրջում է Արագու ստեղծագործության բնույթը. լիրիկական նուրբ թախիժին հաջորդում է ուրախ յումորը, հանդես ե գալիս ռեալիստ գրողը, վորը կյանքի յերևույթներին մոտենում է հաղթանակող պրոլետարիատի տեսանկյունից, տեսնում է կյանքի վարդացումը և առաջնութացը սոցիալիզմի ուղղությամբ, մշակում է իր գրական նոր վոճը — սոցիալիստական ռեալիզմը:

IV

1933 թ. լույս տեսավ Արագու պատմվածքների չորրորդ ժողովածուն «Յեկվորներ» վերնագրով, վորի մեջ ամփոփված է հեղինակի առաջին մեծածավալ վիպակը, վորը գրավում է ժողովածուի համարյա կեսը:

Դա առաջին գրվածքն է, վորի մեջ Արագուն ընդարձակում է իրեն հատուկ կարճ պատմվածքի սահմանները, վերցնում է կյանքի ավելի լայն կտավ և վորն ամենից ուշադրափն է, գրվածքին տալիս է

կիսատատուպիական, «Փանտաստիկական» բնույթ, վիպակի կեռից սկսած պատկերելով ապագա կոմունիստական հասարակությունը:

Ապագան պատկերելու այս փորձը ևս ավելի ուշագրավ է, նկատի ունենալով, վոր հայ խորհրդային գրականության մեջ գրական նման փորձեր գրեթե չեն արվել: Հետաքրքրական է նաև այն, վոր հեղինակը կարողացել է ֆանտաստիկական տարրը սերտորեն շաղկապել, հյուսել սոցիալիստական շինարարության առօրյայի հետ, կոլտնտեսային կարգերի հաղթանակի համար մղվող պայքարի հետ: Յեւ վետք է ասել հեղինակը կարողացել է անել այդ հնարամիտ և վարպետ կոմպոզիցիայի միջոցով:

Արագին իր այս առաջին վիպակում առաջադրում է կարևոր մի պրոբլեմ—սոցիալիզմ կառուցող նոր սերնդի՝ տղամարդու և կնոջ պոլիտիկայի կազմավորումը սոցիալիստական շինարարության բովում: Գործողությունը կատարվում է մի խորհանտեսության մեջ, վորտեղ վորպես պրակտիկանտ աշխատելու յեն յեկել յերկու ուսանող՝ Գուրգենը և Հասմիկը:

Ըստ յերևույթին պետք է օկսվեր այն սովորական պատմություններից մեկը, վոր պատահում է նման դեպքերում, այսինքն՝ սիրահարություն «աշխատանքի պրոցեսում» և վերջը ամուսնություն կամ խղում ինչ-ինչ պատճառներով: Սակայն Արագին իր պատմվածքում այդ «սովորական պատմությանը» տվել է անսպասելի, որիգինալ լուծում: Նա իր յերիտառարդ հերոսներին պատմվածքի կեռից փոխադրում է ապագա կյանքը՝ կոմունիզմի աշխարհը, վորը վոչ այլ ինչ է, յեթե վոչ ներկայի որինաչափ զարգա-

ցումը, հարուստ մի բնագավառ, վորը անսպառ
նյութ կարող է տալ ֆանտազիայով ոժտված խորհրդ-
դային ամեն մի գրողի: Այս յերեվակայական տե-
ղափոխությունը կատարվում է խորհրտեսուծյան
մոտակա մի բլրի վրա՝ լուսնի շողերի տակ, հենց այն
դիշերը, յերբ Գուրգենը և Հասմիկը վերադարձել եյին
հարեան գյուղից, վորտեղ խորհրտեսուծյան դի-
րեկտոր, հին հեղափոխական Միքայելի հետ միասին
նրանք ներկա եյին յեղել կոլտնտեսության կազմա-
կերպման ժողովին և ակտիվ կերպով մասնակցել
նրան:

Կոլտնտեսային կարգը հաղթանակում է, սոց-
իալիզմը վերջնականապես տիրապետում է կյանքի
բոլոր բնագավառներին, սակայն կապիտալիզմի վեր-
ջին մնացորդները մարդկանց գիտակցության մեջ
դեռևս զգացնել են տալիս իրենց: Այդ հին մնացորդ-
ներից մեկն է՝ «տրամադրու գերիշխանությունը կնոջ
նկատմամբ»: Այդ հոգեբանության մի փոքրիկ
մնացորդ դեռևս թագուն պահպանվել է յերիտասարդ
կոմունիստ Գուրգենի «ուղեղի յենթագիտակցական
շերտերում»: Այդ «գերիշխանությանը» դիմադրելու,
«սիրային գողերից» պաշտպանվելու համար է, վոր
Հասմիկը տորճանակ է պահում իր մոտ: Այդ
մահացու «խաղալիքը» Հասմիկին տալիս է առաջին
հայացքից ինչ-վոր խորհրդավորութուն: Սակայն
հեղինակը պատճառաբանում է այդ մոտիվը, վորպես
հնի, անցյալի սիմվոլ՝ ատրճանակը մերկացվում է
վիպակի վերջում, ապագա կոմունիստական աշխար-
հում, վորտեղ Գուրգենն ու Հասմիկը կատարում են
իրենց յերևակայական ճամբորդությունը:

Ջեխովը ասում է, վոր յեթե պիտի առաջին
գործողության մեջ պատից մի հրացան է կախված,
ապա հետագայում այդ հրազենը պետք է պայթի:
Արագու հերոսուհու ատրճանակը չի «պայթում», ու-
կայն դրանով նրա ներկայությունը վոչ պակաս
«պատճառաբանվում է»: Նա կատարում է իր դերը
պատմվածքի սյուժետային կառուցվածքի մեջ, ու-
կայն վոչ վորպես զուտ ձևական մոմենտ, այլ վորպես
բովանդակությամբ հագեցած սիմվոլ, վորը ինչպես
նշեցինք, մերկացվում ու արժեքազրկվում է անդա-
ռակարգ կոմունիստական հասարակության մեջ:

Յորք ապագայի գիտնականներից մեկը, վորի
զեկուցմանը ներկա յեն լինում մեր ենտուզիաստ-
ները, խոսում է այն մասին, վոր «զենքերը դարձել
են թանգարանների դարդեր»... հանկարծ Հասմիկն
այլալվից.

«— Հիվանդ ես,— հարցրեց Գուրգենը.

— Ձե Գուրգեն, բայց հիվանդից ել վատ եմ...
Գրպանումս ատրճանակ կա, վերցրու»:

Վիպակի վերջում, յերբ յերկու յերիտասարդ-
ներն ավարտում են իրենց պատմությունն ապագայի
յերկրի մասին—

«— Ի՞նչ բերինք ապագայի յերկրից,— հարց-
րեց յերիտասարդը:— Մի ողանալ բերինք— «Դեպի
ապագա» ողանալը: Նա հիմա մեր թևերն է դառել...»

«Ի՞նչ ի՞նչ թողինք այնտեղ:

«— Յեռ թողի իմ ատրճանակը,— ասում է աղ-

ջեկը:

— Ի՞նչ յեռ թողի այնտեղ քո յերեակայած
«անցյալի յենթագիտակցական ֆուսյորդները»...

Անկառկած Արաղին նպատակ էի ունեցել գրելու
զուտ «ուտոպիական» մի վիպակ՝ հիմնված լոկ ֆան-
տազիայի վրա: Նա փորձ ե արել՝ յիշեցնել ներկայից,
նրա զարգացման տենդենցները՝ վորոշ շտրիխներով
տալ ապագա կոմունիստական հասարակությունը, վո-
րի մեջ բնությունը նվաճված ե մարդկության կող-
մից, գիտությունն ու տեխնիկան վիթխարի նվաճում-
ներ են կատարել:

«Մենք աշխատանքի յենք լծել բոլոր գետերն ու
գետակները, հիդրոէլայաններ կառուցել, լծել ենք քա-
մին ու արևը, — ասում ե «ապագայի բնակիչ» պրո-
ֆեսոր Արեգյանը, — յերկիրը փոխել ե իր վաղեմի
գեմքը... մեր ամբողջ կյանքը մեծ պլանի մեջ ե ա-
ռած. կա մի մեծ համաշխարհային պլանային խոր-
հուրդ, վորը տարեկան չորս անգամ ժողով ե ունենում
յերկրագնդի զանազան կետերում...»:

Հեղինակը իր հերոսներին տանում ե ապագա
Յերևանը: Նրանք սավառնակից ազահությամբ նա-
յում են ցած: «Հասմիկը նայում ե նախկին կայա-
րանի կողմը, կարծելով, թե կգտնի մյուս թաղերը.
բայց գործարաններն ել չեյին ջոկվում — նրանք ա-
ռանց ծխնելույղների եյին. իսկ նրանց շուրջն այն-
քան նոր ծառաստաններ, նոր շենքեր կային, վոր նա
չկարողացավ մի բան պարզել... միայն Ջանգու գետն
եր ձգվել ոձի նման, բայց նրա ափերն ել բոլորովին
փոխված եյին»:

Պրոլետարիատի գիկատառութայի եպոխայի են-
տադրիաթտները ցանկանում են տեսնել իրենց ծանոթ
«Յեցակեր» գյուղը, վորի վրա նրանք «սոցարշավ» եյին
կազմակերպել առաջին կոլտնտեսության հիմքը դնե-

լու համար: Ապագայի հնազանդութեան պրոֆեսորն իր պատմական քարտեզի վրա հաղիվ ե գտնում նախկին «Յեցակեր» գյուղը, վորը գտնվում ե «51-րդ սոցիալիստական քշիշի շրջանում»: Տեսնելով այդ կոկիկ քաղաքի տները՝ Հասմիկն ապշած հարց ե տալիս.

«— Սրանք ձեր հանգստյան տներն են:

«— Վոչ, սրանք մեր թովորական տներն են,— պատասխանում ե նրան «ապագայի մարդը»:

Ըստ եյության Արազին վոչինչ չի հնարել: Նա կարողացել ե միայն դիտել և պատկերացնել գիտութեան և տեխնիկայի զարգացման հեռանկարները, այն սնապառ հնարավորութեանները, վորոնց նախադրյալներն ու սաղմերը արդեն կան մեր որերում—սովետ-հորդութեանը (ավիացիա), ռադիոհեռատեսը (տելեփիլիա), ատոմային եներգիան, քամու և արևի ուժի ոգտագործումը, արհեստական անձրև և այլն:

Տեղ-տեղ հեղինակը ավելի ազատ առաջարեզ ե ավել իր ֆանտազիային, որինակ յերբ խոսում ե մարդկային ուղեղը քննող «իզրեկ» ճառագայթների մասին, վորոնք կարողանում են հայտաբերել մարդու հոգեբանութեան վորոշ առանձնահատկութեանները և այլն: Նման տեղերում, և առհասարակ պատմվածքի այդ ամբողջ մասում հեղինակը կիրառում ե թեթև կատակի տոնը՝ առանց սակայն դուրս գալու լրջութեան սահմանից: Թումորիոտական այս նուրբ յերանգին մերթ ընդ մերթ միախառնվում են իսկական բանաստեղծական ավյունով լի նկարագրութեաններ, Այդպիսին ե որինակ ապագա Սեփանիլձի շրջակայքի կարագրութեանը:

«Ահա մոտեցանք Սևանի լճին, վորն արդեն մի

հրաշալիք եր, — լազուր ջրերը շրջապատված սոճիների վերաօլաց անտառներով, վորոնց խիտ կանաչների մեջ հսկա ծաղիկների նման փայլում ելին գունավոր շենքերը: Դժվար եր գտնել մի ուրիշ վայր, ուր բնությունն ու մարդկային արվեստը այդպես ներդաշնակ զուգորդվեյին: Գուրգենը նայում եր հմայված. նա սպառեց իր պոեմի մեջ հին բանաստեղծության վողջարսենալը, քրտնաթոր յեղավ ու մնաց դժգոհ... Նա շարունակ հետ ու առաջ եր շրջում «գեղային» ածականները — «գեղահրաշ» — «հրաշագեղ»... «գեղածիծաղ» — «ծիծաղագեղ»... «զարմանահրաշ» — «հրաշազարման»... ու վերջը չկարողանալով արտահայտիլ իր մեջ հորդացող գեացմունքները, զայրույթով նետեց մատիտը լճի մեջ...»:

Այստեղ Արազին կիրառում ե գրական հետաքրքիր մի ձև. նա մեր բառարանի սովորական բառերը և բանաստեղծական ձևերը անզոր ե գտնում արտահայտելու համար այն գեղեցկությունը, վոր ներկայացնելու յե ապագայի յերկիրը: Բանաստեղծական արսենալի մեր ամենաուժեղ միջոցներն անգամ դժգույն են ապագա կոմունիստական հասարակության կյանքը լիովին պատկերելու համար:

Շատ հետաքրքրական են նաև «թոչող ուսանողների» կազմակերպած դիմավորությունը «հին աշխարհի» ներկայացուցիչներին, «բերքի տոնը», վորտեղ հնչում ե ապագայի մարդկանց հզոր մասսայական յերգը, և վերջապես «արևի ատրուշանը» — արևի եներգիայով շարժման մեջ դրվող «ուժակայանը, վորը ամեն առավոտ, յերբ արևի առաջին ճառագայթները ընկնում են նրա վրա, հնչում ե «Խնտերնացիոնալը»:

Այսպես խորհանտեսութեան մոտակա բլուրի վրա, ցերեկվա հոգնատանջ պայքարից հետո յիշկու ջահել ենտուղիաստները լուսնի շողերի տակ յերազում են ապագայի մասին: Սակայն նրանց յերազը ցնորք չե և վոչ ել հիվանդ ուղեղի դառանցանք: Նրանք գիտեն և զգում են, վոր մեր «ներկան որեցոր լուծվում ե ապագայի մեջ», վոր դա այն ապագան չե, վորի մասին յերազում ելին անցյալի ուտուպիստները՝ եքստազի, ինքնամոռացութեան մեջ ընկած: Նրանք խոսում են ապագայի մասին կեռ-կատակ, կես-լուրջ տոնով և այստեղ զգացվում ե նրանց սոցիալիստական հասարակութուն կառուցող այդ խանդավառների ամբողջ գործնականութունը, ներկայի հաստատումը, ամուր հողի վրա կանգնած լինելը, վորը հնարավորութուն ե տալիս նրանց նուշնիակ ապագան ծառայեցնելու ներկային, նրա միջոցով լուծելու ներկայի խնդիրները:

Ինչ խոք, վոր հեղինակն իր վրա վերցրել ե չափազանց դժվար մի խնդիր, վորը վոչ մի կերպ չեր կարելի լուծել մի քանի տասնյակ եջում, այն ել այն պիտի մի վիպակում, վորը մեծ մասամբ կառուցված ե միանգամայն «ոեալ» նյութի վրա: «Յանտառտիկ տարրը» մտել ե այնտեղ վորպես կառուցվածքային մի մոմենտ սյուժետային հանգույցը լուծելու համար: Յեվ պետք ե ասել այդ մոմենտը հեղինակի կողմից ոգտագործված ե օրամիտ կերպով: Պատմվածքի «Ֆանտառտիկական մասի» առանձնահատկութունն այն ե, վոր իրենք՝ պատմվածքի յերկու հերոսներն են փոխն ի փոխ հորինում այն, իրար պատմելով իրենց յերևակայական ճանապարհորդութունը, մեկը շարունակելով մյուսի կիսատ թողածը և այդպիսով

լրացնելով ամբողջ պատմությունը: Սա անկասկած
որիդինալ պըյոմ է, վորով հեղինակը պատճառաբա-
նում է «ուսողական տարրը»:

Վիպակը գրավում է ընթերցողին նաև դիալոգի
աշխուժությամբ: Դիսավոր գործող անձերը, յերկու
սիրահարները հաճախ խոսում են նուրբ ակնարկնե-
րով, վորով նրանց խոսակցությունը դառնում է
սրամիտ խոսքերի սրախաղություն:

Վիպակում համեմատաբար դժգույն է դուրս
յեկել խորհոնտեռության վարիչ Միքայելի պատկերը:
Ընթերցողի համար պարզ չի պատկերանում այդ հին
հեղափոխականի անցյալը, թերևս նա համեստությամբ
հրաժարվում է մանրամասն կանգ առնիլ իր անցյալի
վրա, թվել աչն ծառայությունները, վոր նա մատու-
տուցել է հեղափոխությանը: Սակայն այդ կարող եր
անել հեղինակը մի քանի նախադասություններով:
Միքայելի պատմությունն իր անցյալի մասին այն-
քան ել տիպական և համոզիչ չէ. նրա ներկա գոր-
ծունեյությունը ևս տրված է վորոշ չափով սխեմա-
տիկ, սակայն պիտի առել—հեղինակին հաջողվել է
դուրս բերել Միքայելին վորպես համակրելի անձնավո-
րություն: Ոժտելով նրան անձնազոհ հեղափոխականի
հատկություններով Արազին կարողացել է ճիշտ կեր-
պով տալ հին և նոր սերնդի փոխհարաբերությունը:
Հեղինակը չի հակադրել նրանց, ընդհակառակը՝ Մի-
քայելի մեջ մենք տեսնում ենք անհուն սեր և խան-
դադատանք դեպի «նորեկները»—սոցիալիզմ կառու-
ցող յերիտասարդ ենտուղիաստները, վորոնք իրենց
կողմից խոր մեծաբանքով և սիրով են վերաբերվում
Միքայելին: Հատկապես հուզիչ է վիպակի ֆինալը,

յերբ Միքայելը դիմավերում է յերկու յերիտասարկ-
ներին և ուրախությունից արցունքի յերկու կաթիլ-
ներ ռահում են նրա ալոսերի վրայով:

V

Յերկրորդ համեմատարար մեծածավալ գրվածքը,
«Ջրվեժի ցոլքում» վիպակը, վոր գրված է 1938 թ.,
նույնպես շոշափում է մի շատ կարևոր պրոբլեմ:
Դա հին մասնագետ—ինժեների հոգեբանության աս-
տիճանական փոփոխման պրոցեսն է սոցիալիստական
նոր կյանքի ազդեցությամբ: Ինժեներ թառյանը
դեռևս պահպանել է բուրժուական ինտելիգենտի վո-
րոշ հատկությունները, ինդիվիդուալիզմը, իշխանու-
թյան սերը: Նա ամեն ինչին մոտենում է իր յետի
տեսանկյունից, նա նախանձով է նայում նրանց,
վորոնք բարձրանում են մասսայից և գալիս գրավե-
լու իր տեղը:

Բանվորական կոլեկտիվը զգում է թառյանի
այդ հակումները, ինքը թառյանը զգում է, վոր ինքը
դեռևս չի «զաված», վոր անհրաժեշտ է փոխել ըն-
թացքը, ուրիշ կերպ աշխատել, մերվել կոլեկտիվի
հետ, նրա հետ միասին առաջ ընթանալ: Թառյանի
մեջ թկոճում է հոգեկան ճգնաժամ:

Այստեղ հեղինակը հանդես է բերում մի նոր
պորժող անձնավորություն—Լիդան՝ Մոսկվայի ժուռ-
նալներից մեկի թղթակիցը: Լիդան ոժտված է ուս-
կնոջ համակրելի գծերով, նա խորհրդային յերիտա-
սարդության խանդավառ ներկայացուցիչն է, բացի
իր անմիջական պարտականություններից, Լիդան
անցնում է ակտիվ աշխատանքի, մոտիկից ծանոթա-

նալով կոմբինատի աշխատանքներին, նկատելով այն
թերությունները, վոր անհրաժեշտ է վերացնել, նա
չի վախենում քննադատելուց հենց գլխավոր ին-
ժեներ թառյանին, վորը վորոշ համակրություն է
զգում դեպի գեղեցիկ Լիդան:

Լիդան ասում է նրան. «Դուք կառուցում եք
շենքեր, բայց կարծես մոռանում եք, վոր դրա հետ
զուգընթաց պիտի կառուցեք և մարդկանց նոր սոց-
իալիստական գիտակցությունը»: Թառյանը Լիդայի
բլոկնոտում իր մասին կարդում է. «Ինժեներ թառ-
յանը... դեռ չի ազատագրվել անցյալի ժառանգու-
թյունից... բանվորները նրա համար ալելի «բանութ»
են, քան սոցիալիզմ կառուցողներ... տարված է
իշխանության տենչով, «կառուցողի» փառքով...»:

Պետք է ասել, վոր հեղինակն այստեղ բավակա-
նաչափ չի պարզում խնդիրը: Մենք չենք տեսնում
այն համոզիչ շարժառիթները, վորոնք կարող եյին
կարճ ժամանակում վերափոխել «իշխանության և
փառքի տենչով տարված» մի մարդու: Անկասկած
Լիդայի ազդեցությունը կարող եր վորոշ դեր խաղալ.
ռական վոչ վճռական: Բավարար չափով ցույց տրված
չե սոցիալիզմի վերջնական հաղթանակի նշանակու-
թյունը հին ինժեների հոգեբանության փոփոխման
գործում, ինչպես և կոլեկտիվի ազդեցությունը: Ձի
համոզում նաև Թառյանի այն վարմունքը, վորով նա
լքում է իր կնոջը և յերեխային: Այդ ակտը վորեւ
չափով չի կապակցվում Թառյանի վերափոխման հետ,
և ճիշտ է ասում Լիդան վիպակի վերջում, թե Թառ-
յանը դեռևս հին մարդն է, դեռ վերջնականապես չի
ազատագրվել անցյալի ժառանգությունից:

Վիպականի թերություններից մեկն էլ այն է, վոր նրանում մենք գործ ունենք միայն հերոսի ներքին աշխարհի, նրա ապրումների հետ: Թառյանի գործողությունների շարժառիթը գլխավորապես հոգեկան է. այսինչ հարցը պետք եր քննել ավելի լայն հիմքի, ոոցիալիզմի համար մղվող պայքարի առորյա պրակտիկայի, սոցիալական և մարդկային հարաբերությունների ֆոնի վրա: Շատ բնորոշ են Լիդայի խոսքերն այն մասին, թե նա ինչպես է պատկերացնում հերոսին. հերոսը նրա համար նա յե, ով ոոցիալիստական շինարարության բովի մեջ ամբողջ եյությամբ տարվում է գործով և մոռանում է նույնիսկ իրեն՝ Լիդային, վորին սիրում է:

Լիդայի պատկերը հեղինակը նկարել է հաջող կերպով: Հաջող կերպով են տրված նաև վիպակի մի քանի եպիզոդիկ անձնավորությունները, ինչպես «բրոնզե ինժեները» — խորհրդային, պրոլետարական ինտելիգենցիայի ներկայացուչիցը (ինժեներ Սարյան), նրա ուսանողական ընկեր Աշխենը, վորը հանդիսանում է Լիդայի հակադիր տիպը, յերազում է լոկ անձնական կյանքի, հաճույքի մասին, կտրված է լայն հասարակական կյանքից:

Անձնական վրեժից մղված Աշխենը կատարում է մի տգեղ արարք, նա զրպարտում է Լիդային Թառյանի կնոջ—Սոֆիայի մոտ. օակայն ներքուստ ստանում է բարոյական հակահարված. նրա վրեժի զգացումը չի բավարարվում, ընդհակառակը նա տիկին Սոֆիայի մոտից դուրս է գալիս ավելի ճնշված և ամոթահար, կարծես նա գնացել եր այնտեղ վոչ թե

մի քան հայտնելու կամավոր կերպով, այլ հարկադ-
րական հարցաքննության յենթարկվելու:

Արագին հաջող կերպով և տվել նաև տիկին
Սոֆիայի պատկերը, վորը ընթերցողի համար վորևե
քացառական հատկություն չի ներկայացնում, ևս ա-
վելի տարակույս արթնացնելով վիպակի նման վեր-
ջավորության նկատմամբ: Տիկին Սոֆիան Աշխենի
ներկայությամբ իրեն պահում և մեծ արժանապատ-
վությամբ, զոպելով ներքին հուզմունքը նա աշխա-
տում և քաղաքավարի հերքել Աշխենի զրպարտու-
թյունները, թերևս ներքուստ հավատալով դրանց,
այս տեսարանը վիպակի լավագույն հատվածներից
մեկն է:

Անկասկած հեղինակի ուշադրությունից վրիպե
և մի կարևոր հանգամանք, վոր չեք կարող դեր
չկատարել կոմբինատի աշխատանքներում նկատված
բացերի մեջ: Բավական չե միայն նշել բյուրոկրա-
տիզմի, իշխանության տենչի, ինքնաքննադատության
ճնշման և զանազան մանր ինտրիգների գոյության
փաստը, այդ բոլորի հետ միասին չեք կարող չլինել
նաև դիտակցական քննադատության մոմենտը, փո-
ղովրդի թշնամիների թագուն սողոսկումը, սոցիալիզմի
հաղթական կառուցման առաջ խոչընդոտներ հարուցե-
լու ոտոր փորձերը: Այս մոմենտի մերկացման բա-
ցակայությունը Արագու վիպակի թերություններից
մեկն է, այդ սլատճառով ել պատկերը լրիվ չի ստաց-
վում: Շիշտ և վիպակում մենք տեսնում ենք ինժեներ-
տեխնիկական վորոշ տարրերի դիմադրությունը,
նրանց ինտրիգները Թառյանի դեմ, ռակայն այդ

բոլորը կատարվում է կարծես միայն «կարյերայի», «աթոռի» համար, անձնական նախանձից դրդված:

Այդպիսի տիպ է ինժեներ Վարդանյանը, Բազմի հին ինժեներներին, մաղձոտ մի մարդ, վորի միակ ձգտումն է տապալել Թառյանին: Նույնպիսի կարյերիստ է և ինժեներ Սարգսյանը, «չափած-ձեւած շարժումներով մի մարդ...» վորը անցյալից բերել էր իր հետ իր հին աշխարհը մի փոքրիկ արկղի մեջ և պահում էր զգուշությամբ, բացելով վոչ բոլորի մոտ: Ահա այդ տիպերը, վորոնց Արազին կարողանում է բնորոշել մի քանի շարիխներով. անկասկած այդպիսի տիպեր յեղել են և կան խորհրդային ինտելիգենցիայի շարքերում, վորոնք աստիճանաբար զավում և դուրս են շարտվում այնտեղից վորպես խորթ և անհարազատ տարրեր. սակայն թշնամու դիմադրությունը միայն դրանցով չի արտահայտվում:

Չնայած այդ թերություններին Արազու այս վիպակը ուշագրավ յերևույթ է մեր արձակագրության մեջ և բովանդակում է նկարագրական մի շարք հաջող եջեր: Բնորոշ հանգամանք է և այն, վոր իր այս յերկրորդ մեծածավալ գրվածքից հետո Արազին անցավ պիես գրելու մտքին, վոր և նա իրագործեց, գրելով «Վոսկե յերազներ»-կոմեդիան, վորն արժանացավ մրցանակաբաշխության Ժյուրիի հավանության: Պիեսը դեռես տպագրված չէ և մենք վաղաժամ հենք համարում խոսել նրա մասին: Կարելի չէ նշել միայն այն, վոր պիեսը շոշափում է մեր սոցիալիստական շինարարության առորյա խնդիրները, սակայն պիեսում հեղինակը ավելի չէ կանգ առնում

Թշնամական տարրերի գիտակցական ֆնասարարու-
թյունը մերկացնելու հարցի վրա:

«Զրվիժի ցուքում» վիպակից հետո Արազին
դրեց մի շարք նոր պատմվածքներ, ինչպես «Գայ-
լերի ճամբին», «Կրակը», «Սև կառնտը» և այլն:

Հետաքրքրական պատմվածք է «Գայլերի ճամ-
բին»-ը, այստեղ վարպետորեն մերկացված է բուրժու-
ական իրավունքի թեորիան: Կիսով չափ ցնդած Մար-
կոսյանը (հին փառաբան) ճգնում է մի մեծ աշխա-
տությամբ ապացուցել հոռմեական իրավունքի վրա
հիմնված իր տեսությունը, ոգտվելու և չոգտվելու
իրավունքի մասին. սակայն գյուղխորհրդի նախա-
գահի առողջ դատողությունը՝ հիմնված սոցիալիստա-
կան սեփականության և իրավունքի պարզ ըմբռնման
վրա, ջարդ ու փշուր է անում լատիսներեն ցիտատ-
ներով խոսող Մարկոսյանի իրավաբանական կառու-
ցումները: Գյուղխորհրդի նախագահը հարցը շար-
ցուցիչ կերպով պարզ է դնում, նա գրողի ծոցն է
ուղարկում «չոգտվելու իրավունքը» և այլ «հոռմե-
ական ատրիբուտները»: Յեթե Մարկոսյանը չի ու-
զում ոգտագործել իր ամառանոցը վորպես բնակարան,
ապա գյուղը կոգտագործի այն վորպես դպրոց:

Յերբ Մարկոսյանը հեռանում է, նախագահի
սենյակում բռնկվում է մի մեծ ծիծաղ. «—Են վճնց
եր ասում—չոգտվելու իրավունք... հմ, հմ, մյ թե
ադվակատ ա ե...»:

Նախկին փառաբան Մարկոսյանը հավատում է
մասնավոր սեփականության «անխախտ որենքին»:
Նա ունի մի տուն գյուղում, վերը տարվա մեծ մալը
չի ոգտագործում: Դա յեղել է նախկին հարուստի աչ-

մառանոցը: Դյուղխորհուրդն առաջարկում է Մարկոսյանին մշտական կերպով ապրել այդ տանը, հակառակ դեպքում տունը կգրավվի գյուղի կողմից և կողտագործվի, վորպես դպրոց: Հեղինակը չի ասում թե դեպքը յերբ և կատարվել: Անկասկած պետք է յենթադրել, վոր խոսքը վերաբերում է խորհրդայնացման առաջին տարիներին:

Արազին իր պատմվածքը հիմնականում կառուցել է կոմիկական-յումորիստական պլանով, ուստի և համոզիչ չեն այն տեղերը, ուր մտնում են լուրջ ուսուցիչական պատմվածքի մոմենտներ: Որինակ համոզիչ չե Մարկոսյանի և իր զինվորական վորդու փոխհարաբերության պատկերումը:

Պետք է ասել, վոր Արազին կարողացել է հաջող կերպով տալ բուրժուական իրավունքի մերկացումը: Սակայն պատմվածքի վերջավորությունը ոտացվել է մի փոքր ավելի տրագիկական, վորը վորոշ չափով խախտում է պատմվածքի յումորիստական բնույթը: Վողբերգական վերջավորությունը չի ներդաշնակվում պատմվածքի ընդհանուր իդեայի հետ: Մարկոսյանի տիպը դուրս է յեկել մի փոքր «գրոտեսկային», չափազանցված գծերով: Դա մի իսկական «անախրոնիզմ է» մեր օրերում, մի տեսակ հնադարյան «իխտիոզավր»—բուրժուական ռեփականության պաշտպանի դերում: Իզուր չե, վոր Արազին Մարկոսյանին հանգես է բերել, վորպես մի կիսախելագար տիպ, մենամուկ, վորը ունի իդեֆիկա և չի կարող ազատվել դրանից: Նրա տրագիկական վախճանը միայն լուծում է խնդիրը: Այս տեսակետից վորոշ չափով կարելի յե արդարացնել հեղինակի ձգտումը Մարկոսյանին պատկե-

ընդու շարժի, գրոտեսկի մոմենտներով, վորպէս քա-
ցառիկ մի տիպար մեր ուրերում, հաղվագչու ա մի
եկզեմպլյար:

Վերջին շրջանում Արաղին ունել և գրել պատ-
մըվածքներ հեղափոխական անցյալից. այդ պատմը-
վածքներում յերբեմն կարծես կարելի յե տեսնել ինք-
նակենսագրական վորոշ մոմենտներ: Յիվ պետք և
ասել, վոր Արաղու անցյալը հնարավորություն և
տալիս նրան առատ նյութ ստանալու այդ կարգի
պատմվածքների համար: Այդ հետաքրքիր պատմվածք-
ները լույս են տեսել «Ակունքներ» վերնագրով մի առան-
ձին գրքում: Այստեղ պետք և նշել միայն վոր պատմը-
վածքների այդ ժանրը, վորի մի նմուշին ծանոթ և
ընթերցողը («Կարմիր հարսնացուն» տես՝ Յերկերի
ժող. հ. I) միանգամայն բեղմնավոր և և այժմեական:
Արաղին մեծ ծառայություն կմատուցի մեր գրակա-
նությանը հետագայում ևս տալով հեղափոխական անց-
յալի պատկերները:

Մենք հնարավորություն չունենք մի առ մի
կանգ առնելու Արաղու մի շարք այլ պատմվածք-
ների վրա. դրանց մեջ կան խիստ ուշագրավ
և հետաքրքիր պատմվածքներ, վորոնք տա-
լիս են կյանքի ցայտուն և բնորոշ պատկերներ:
Արաղու պատմվածքների նոր շարքը անկասկած ըն-
թերցողի համար պետք և ներկայացնի նոր հետաքրք-
րություն: Այդ պատմվածքներում հեղինակը ան-
պաճույճ, պարզ լեզվով պատմում և յերիտասարդ ու-
սանողի մուտքը հեղափոխական գործունեյության առ-
պարեզը, նրա առաջին դժվարությունները, վտանգի

յենթարկվելու Խաչատուրիքը, հեղափոխական փորձի աստիճանական գրավումը: Այդ բոլոր պատմվածքների մեջ Արաղին մնում է հավատարիմ ռեալիստական ուղղութեանը. նա հանդես է գալիս վերադառնալիս ստական ռեալիզմի մեթոդի կիրառողներից մեկը խորհրդային հայ արձակագրութեան մեջ:

Արաղու ստեղծագործութեան հիմնական առանձնահատկությունն այն է, վոր նա հենց ժողովրդի, իր գրական գործունեյութեան առաջին քայլերից սկսած անցնում է պայքարող պրոլետարիատի պլատֆորմի վրա, վորպէս հիմնական թեմա վերցնում է հեղափոխութեանը. Նրա բոլոր յերկերում կարմիր թելով անցնում է բանվոր դասակարգի և չքավոր գյուղացիութեան շահերի պաշտպանութեան գաղափարը, սոցիալիզմի վերջնական հաղթանակի նկատմամբ ունեցած խոր հավատը:

Միանգամայն խորթ լինելով ազգային ռահմանափակութեան տենդենցներին, բուրժուական նացիոնալիստների քարոզած ազգայնական տեսութեաններին, Արաղին տոգորված է պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարով, վոր նա վառ կերպով մարմնացրել է «Կարմիր համբույր» պատմվածքում: Հին պրոլետարական գրողը հեղափոխութեանից հետո ևս անվերապահորեն իր գրիչը նվիրեց Լենինի-Ստալինի կուռակցութեան գաղափարներին պրոպագանդին, գեղարվեստական պատկերներով միջոցով վեր հանելով այն համաշխարհային-պատմական նվաճումները, վոր ձեռք է բերել բանվոր դասակարգն ու աշխատավոր դուռ-ղացիութեանը կոմունիստական կուռակցութեան դեկլարութեամբ:

Ինչպես տեսանք, Արաղին կարողացել ու իր մի շարք պատմվածքներում ցայտուն պատկերների միջոցով դրսևավորել է սոցիալական այն խոր հեղաշրջումը, վոր կատարել է սոցիալիստական մեծ հեղափոխությունը մասնանների մեջ: Մենք տեսանք, թե ինչպես ճնշված, ընչազուրկ և տանջված մարդը, պրուլետարը և աշխատավոր դյուղացին բարձրանում և պատմության մեջ չտեսնված դիրքի վրա, առաջին անգամը պատմության մեջ ձեռք է բերում մարդկային իրավունքներ, վորոնք այժմ վերջնականորեն և առհավիտ արձանագրված են Ստալինյան Սահմանադրության մեջ: «Աչքը վախեցած» Հանեպների, Մուկուչների, Բենոնների («Հազար գլխանի») և նման այլ պարզ մարդկանց փոխակերպումը և վերածումը մարդկային արժանապատվությամբ լի իսկական հերոսների—ահա այն խորիմաստ և վիճիխարի պրոցեսը, վոր տեղի յե ունեցել սոցիալիզմի յերկրում անցած քսանյերկու տարիների ընթացքում: Յեվ անհրաժեշտ է նշել, վոր Արաղին կարողացել է ադ շնշանավոր թեման իր ժամանակին, սկսած Անդրկովկասի խորհրդայնացման առաջին տարիներից, մշակել և տալ այնպիսի պատկերներ, վորոնք խորը տպավորվում են, մնում ընթերցողի հիշողության մեջ:

Այժմ, յերբ Ստալինյան սահմանադրության հիման վրա ընարված Գերագույն Խորհրդի դեպուտատների թվում են ժողովրդի ծոցից յելած մարդիկ, սոցիալիստական հայրենիքի անվանի զավակները, յերբ այդ դեպուտատների թվումն է և ինքը խորհրդային ավագ դրող Արաղին, վորը իբրև ավագագույն դեպուտատ բաց արեց Հայկական ԽՍՀ Գերագույն

Խորհրդի առաջին սեսիան, մենք չենք կարող մտովի չհիշել նրա պատմվածքների հերոսներին՝ այդ Մուկուչներին, Հանեսներին, Բենոներին, վորոնց անցած կյանքի ուղին շատ բանով նման է մեր հայրենիքի մյուս պավակների, ժողովրդական հոծ դանգվածներից դուրս յեկած մարդկանց կյանքի պատմությանը։

Սոցիալիստական մեծ հեղափոխությունն եր, վոր կատարեց այդ «հրաշքը», մասսաներին բարձրացրեց ունեվոր և կուլտուրական կյանքի մակարդակին, ժողովրդի մարդկանց տվեց իսկական իրավունքներ, դեմոկրատական լայն ազատություններ և կուլտուրական անսահման վերելքի հնարավորություն։

Գեղարվեստական գրականության մեջ այս նըշանակալից յերևույթի պատկերման յերախտիքը մեծ չափով պատկանում է նաև Արագուն. ճիշտ է, Արագին տալիս է գլխավորապես այդ պրոցեսի սկզբնական շրջանը, սակայն «Լուսնի շոյերով» վիպակում արդեն նա յերևակայության թևերով թռչում է դեպի ապագա կոմունիստական հասարակությունը, վորտեղ արդեն լիովին ավարտված է այդ պրոցեսը, վորտեղ տիրում է տիեզերական ներդաշնակութուն մարդկային հասարակության մեջ։

Մինչ այդ, սակայն, Արագին չի մոռանում, վոր դեռևս չի վերջացել պայքարը, քանի դեռ մեզ շրջապատում են կապիտալիստական յերկրները, քանի դեռ թշնամին սրում է իր գազանային ատամները, փորձելով դուրս գալ մեր Մեծ Միության անառիկ ամբողջի դեմ։

Արագին այժմ չնայած իր արդեն պատկառելի տարիքին ապրում է իր ստեղծագործության նոր

վերելքի և ծաղկման շրջանը. յերիտասարդական ավ-
յունով նա աշխատում է, յեռանդով մասնակցում
գրական-հասարակական կյանքին, հանդես գալով վոր-
պես Խորհրդային Հայաստանի գրականության առա-
ջավոր ներկայացուցիչներից մեկը, վորին ճանաչում
և սիրում են Խորհրդային ընթերցողները: Արագին
Խորհրդային կառավարության—ԽՍՀՄ Գերագույն Խոր-
հրդի Նախագահության կողմից պարգևատրված է
«Պատվո նշան» շքանշանով: Վորպես Հայաստանի Խոր-
հրդային Գրողների միության պրեզիդենտի անդամ
նա կատարում է ղեկավար աշխատանք և իր Խոր-
հուրդներով ոգնում և գործին:

Հասարակական աշխատանքը չի խանգարում Ա-
րագուն՝ առաջվա թափով շարունակելու իր գրական աշ-
խատանքները: Այժմ նա զբաղված է իր նոր վեպով,
վորը կրում է «Այրվող հորիզոնը» վերնագիրը: Այդ
վեպի մի քանի հատվածները տպագրվեցին «Խորհր-
դային գրականություն» հանդեսում:

Արագին պատկանում է այն գրողների թվին,
վորոնք կարող են խոսել լայն զանգվածների հետ
պարզ և մատչելի լեզվով, առանց ֆորմալիստական
տրյուկների և պաճուճանքների: Նա դաստիարակվել է
անցյալի գրականության վարպետների, մեծ ռեա-
լիստների յերկերով: Նա ունի գրական լուրջ կուլ-
տուրա, խստապահանջ է դեպի գրական ստեղծագոր-
ծությունը, ղգում է այն մեծ պատասխանատու-
թյունը, վոր դնում է սոցիալիստական հայրենիքը
յուրաքանչյուր իսկական Խորհրդային գրողի վրա:

Այս ամենն անխախտ գրավական է, վոր Արա-
գին, ղինված սոցիալիստական ռեալիզմի մեթոդով,

հետադարձում ևս խորհրդային ընթերցողին կտա ուշագրավ և արժեքավոր յերկեր, պատկերելով սոցիալիզմի մեծ դարաշրջանը, Լենինի-Ստալինի կուսակցության գաղափարներով վոգեշնչված խորհրդային յերջանիկ ժողովրդի կյանքն ու պայքարը, վեր հանելով սոցիալիզմի կառուցման, սոցիալիստական հայրենիքի պաշտպանության հերոսական մարտիկների, խորհրդային քաղաքի և գյուղի մարդկանց ճշմարտացի և հոյակապ պատկերը:

Ահա այն պատվավոր խնդիրը, վերի իրագործմանը պեսք և նվիրվի յուրաքանչյուր խորհրդային գրող, կատարելով իր նվիրական պարտքը Սոցիալիստական մեծ հայրենիքի հանդեպ:

Պատ. խմբագիր՝ Հր. Մարգարյան
Տեխ. խմբագիր՝ Ստ. Ալթունյան
Սրբագրիչ՝ Մ. Մարտիկյան

Գլավխիտի լիազոր՝ Զ—1064 Հրատ.
№ 5076. Պատվեր 485. Տիրաժ.
3000. Թուղթ 94×105 Տպագր.
4 մամ. Հանձնված և արտադրու-
թյան 22 նոյեմբերի 1939 թ.
Ստորագրված և տպագրության
համար 3 հունվարի 1940 թ.
Հայպետհրատի I տպ. Յերևան,
Լենինի, 65



Այլ - 10

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0042414

(254)
20504

I
A 6433